ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ք ԱՐՏԱՇԱՏ

2019թ.

Ց Ա Ն Կ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....3
2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ 4
3. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ.....7
4. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....9
5. ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....10
6. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....14
7. ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ.....16
8. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....19
9. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....23
10. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....29
11. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....34
12. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ.....36
13. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....38
14. ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....41
15. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ.....46
16. ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ.....53
17. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.....54
18. ՋՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ 58

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ / առ. 01.01.2019թ./

ՀՀ Արարատի մարզպետարանը 2018թ. իր գործունեությունն իրականացրել է առաջնորդվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, ՀՀ Նախագահի հրամանագրերով, կարգադրություններով, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներով, ինչպես նաև մարզպետի որոշումներով, կարգադրություններով և աշխատակազմի ղեկավարի հրամաններով:

Հաշվետու ժամանակահատվածում Արարատի մարզպետարանում մուտքագրվել է 13684 փաստաթուղթ, որից 8705-ը՝ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով:

Մուտքագրված փաստաթղթերից.

3452-ը ստացվել է վերադաս մարմիններից, նախարարություններից և այլ գերատեսչություններից,

7116-ը՝ տեղական ինքնակառավարման մարմիններից և այլ կազմակերպություններից, որից 3855 -ը՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի փաթեթներ,

3012 -ը՝ քաղաքացիներից ստացված դիմումներ, բողոքներ և առաջարկություններ:

Վերադաս մարմիններ և այլ կազմակերպություններ են հասցեագրվել 8693 փաստաթուղթ:

2018թ. ընթացքում, համաձայն սահմանված կարգի, կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բազմաբնույթ հարցերով հաշվառվել և ընդունելությանն են մասնակցել 725 քաղաքացի:

2018թ. ընթացքում մարզպետի կողմից ընդունվել է 192 որոշում, 316 կարգադրություն:

Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստվել են մարզպետարանի աշխատակազմի 36 քաղաքացիական ծառայողներ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված 15599 իրավական ակտ, որից 3513-ը՝ ավագանու որոշում, 10005-ը՝ համայնքի ղեկավարի որոշում, 2081-ը՝ համայնքի ղեկավարի կարգադրություն:

Վերանայման կամ վերացման առաջարկությամբ վերադարձվել է ՀՀ օրենսդրությանը հակասող 83 իրավական ակտ, որոնք օրենքով սահմանված ժամկետում վերանայվել և համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրությանը:

2. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզպետարանը սպասարկում է 260 կազմակերպությունների, այդ թվում 151 մարզային ենթակայության, 95 համայնքների և 14 համայնքային ենթակայության ամբուլատորիաների:

2018թ. պետական բյուջեից մարզպետարանի ենթակայության հիմնարկներին հատկացված ֆինանսական միջոցների ընդանուր գումարը կազմում է 8 մլրդ 32.4 մլն դրամ, փաստացի ֆինանսավորվել է 7 մլրդ 976.7մլն դրամ, կատարողականը կազմել է 99.3%:

Կազմվել է մարզի համայնքների 2018թ. բյուջեների ամփոփ տեղեկանքը՝ ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման, ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, մեթոդական օգնություն է ցույց տրվել մարզի 95 համայնքների ղեկավարներին և աշխատակազմերի հաշվապահներին՝ համայնքների 2019 թ. բյուջեների նախագծերի կազմման ուղղությամբ:

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ/առ 01.01.2019թ. դրությամբ/

	Ֆինանսավորվող ոլորտը	Հաստատված բյուջե 2018	Ճշտված բյուջե	Դրամարկղային ծախս	Կատ %
1.	Գործադիր իշխանության,պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	**487955,4**	**482697,8**	**477201,04**	**98,86**
2.	Արտասահմանյան գործուղում	**580,43**	**580,43**	**580,43**	**100,00**

3.	Մարզային նշանակության ավտոճ. ձմեռ. պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	**54608,0**	**54608,0**	**54107,5**	**99,08**
4.	Մշակութային միջոցառումների իրականացում	**1818,0**	**1818,0**	**1290,5**	**70,98**
5.	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում	**25671,2**	**25671,2**	**25671,2**	**100,00**
6	Հանրակրթական ուսուցում	**6593752.8**	**6491205.5**	**6491157.5**	**100,00**
7	Ներառական կրթություն	**245368.7**	**301376.8**	**300916**	**99,68**
8	Նախադպրոցական կրթություն	**94457,6**	**91960,0**	**91960,0**	**100,00**
9.	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	**17753,5**	**17753,5**	**17753,5**	**100,00**
10.	Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	**6052,2**	**9064,8**	**8912,5**	**98,32**
11.	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովում	**290520,0**	**290520,0**	**280579,36**	**96,58**
12.	Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարներ	**116,9**	**116,9**	**0,0**	**0,00**
	Այլ ընտրանքային ծառայության ապահովում	**2100,0**	**2100,0**	**2100,0**	**100,00**
13	Ընդամենը	**7820754,7**	**7769472,9**	**7752229,53**	**99,78**
1	Պետական աջակցություն սահմանամերձ համայնքերին	**23542,8**	**23542,8**	**18315,04**	**77,79**
2	Պահուստային ֆոնդ	**125673,0**	**236471,48**	**203294,5**	**85,97**
3	Հայաստանի Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100 ամյակին նվիրված միջոցառումների իրականացում	**2920,0**	**2920,0**	**2882,0**	**98,70**
4	Ընդամենը՝ /1+2+3/	**152135,8**	**262934,3**	**224491,57**	**85,38**
	Ընդամենը՝ /13+4/	**7972890,5**	**8032407,2**	**7976721,10**	**99,31**

ՀՀ պետական բյուջեից 2018թ. մարզպետարանի և մարզպետարանի ենթակայության հիմնարկների ֆինանսավորման, համայնքներում մուտքերի ընթացքի, ինչպես նաև առողջապահական ՓԲԸ-ների ֆինանսավորման վերաբերյալ.

- ՀՀ 2018թ. պետական բյուջեն հաստատվելուց հետո՝ կազմվել է մարզի 107 հանրակրթական դպրոցների, 2 թանգարանների համար բյուջեից կատարվող

հատկացումների ամփոփ նախահաշիվները, բյուջեով նախատեսված ծախսերի բաշխումը՝ եռամսյակային կտրվածքով:

- Համայնքներից ընդունվել, ամփոփվել, քննարկվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել մարզի համայնքների 2017թ. տարեկան բյուջեների կատարման ամփոփ տեղեկանքը՝ ըստ առանձին եկամտատեսակների:
- Սահմանված կարգով՝ եռամսյակային կտրվածքով, ՀՀ տարածքային կառավարման և և զարգացման նախարարություն է ներկայացվել հաշվետվություններ մարզպետարանի և մարզային ենթակայության հիմնարկների ֆինանսավորման, վարձավճարների գանձման, համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի կատարման վերաբերյալ:
- Ամփոփվել է մարզի համայնքների ամսական, եռամսյակային, կիսամյակային և 9 ամսվա բյուջեների կատարողականը:
- Ընդունվել, ամփոփվել և ՀՀ Ֆինանսների նախարարություն է ներկայացվել մարզի կրթության համակարգի հիմնարկների 2018-2019թթ. ուստարվա տարիֆիկացիաները:
- Համայնքների 2018թ. բյուջեով եկամտային մասը /առանց օտարումից մուտքերի և տարվա սկզբի մնացորդի/ նախատեսվել էր 7 մլրդ 452.7մլն դրամի չափով, որի դիմաց փաստացի մուտքը կազմել է 7 մլրդ 455.4 մլն դրամ, կամ 100.04%, նախորդ տարվա համեմատությամբ ավել է մուտքագրվել 1մլրդ 686 մլն դրամ:
- Սեփական եկամուտների գծով նախատեսված 2 մլրդ 776.1մլն դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 2 մլրդ 780.6մլն դրամ, սեփական եկամուտների պլանը կատարվել է 100.2% -ով;

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ-ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

	2017 թվական			2018 թվական		
	պլան	կատ	կատ	պլան	կատ	կատ
Անվանումը	հաշվետ	31.12.2017թ	%	հաշվետ	31.12.2018թ.	.%
1	2	3	4	5	6	7
Հողի հարկ	649 506,5	658 755,8	101,4	658 789,65	627 627,91	95,3

Գույքահարկ	869 667,1	955 211,9	109,8	958 742,00	1 022 740,33	106,7
Տեղական տուրք	85 853,7	91 962,1	107,1	92 884,76	95 442,53	102,8
Պետական տուրք	40 200,0	42 289,5	105,2	41 650,00	51 434,54	123,5
վարձակալություն	190 470,0	195 002,3	102,4	178 456,36	185 616,94	104,0
Այլ մուտքեր	392 092,0	422 574,0	107,8	845 594,0	797 775,0	94,3
Այդ թվում աղբահանություն	163 230,0	102 062,9	62,5	332 102,01	259 580,48	78,2
Դոտացիա	4 481 449,0	4 481 271	100,0	4 467 231,7	4 467 236,65	100,0
Պատվ. լիազորություն	37 248,0	33 533	90,0	33 245,70	33 183,10	99,8
Սուբվենցիա երաժշտ. դպրոց	29 341,0	28 512	97,2	26 217,00	25 671,20	97,9
դրամաշնորհ /աշխ.էներգ.թանկ						
ընթ ոչ պաշտոն դրամաշնորհ				6 300,0	6 300,00	
Սուբվենցիա ընթացիկ						
Սուբվենցիա կապիտալ				250,0	600,00	
դրամաշնորհ /կապիտալ/				143 224,40	137 383,70	
Ընդամենը եկամուտներ	6 775 827,3	6 909 112,1	102,0	7 452 585,6	7 451 011,9	100,0
Սեփական եկամուտներ	2 227 789	2 365 796	106,2	2 776 117	2 780 637	100,2

Համայնքներն աշխատավարձի գծով պարտքեր չունեն:

3.ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ

Մարզպետարանի ներքին աուդիտի ենթակա շրջանակը կազմված է 181 միավորներից, որից՝ 7-ը՝ վարչություններ, 17-ը՝ բաժիններ, 3-ը՝ առանձնացված ստորաբաժանումներ, 107-ը՝ դպրոցներ և 41-ը՝ բժշկական հաստատություններ:

Համաձայն ՀՀ Արարատի մարզպետի 2018 թվականի հունվարի 10-ի N 01 որոշման 2018 թվականին ռիսկերի գնահատման արդյունքում ընտրանքային կարգով ներքին աուդիտ է պլանավորվել և իրականացվել 25 դպրոցներում, 6 առողջության առաջնային պահպանման կենտրոններում և 2 բժշկական կենտրոններում:

Միավորների կառավարչական, կազմակեպչական, գործավարական և ֆինանսական գործառույթներում հայտնաբերվել են թերություններ և որոշ օրենսդրական ակտերի խախտումներ:

Որոշ միավորներում հայտնաբերվել է նաև անաշխատունակության նպաստների վճարների սխալ հաշվարկներ, ինչի հետևանքով ավել վճարված գումարների՝ դեպի բյուջե հետգանձման վերջնաժամկետներ են սահմանվել:

2018 թվականի ընթացքում իրականացված ներքին աուդիտի արդյունքում կատարված հայտնաբերումների արդյունքում բյուջե հետ գանձում է կատարվել 960 հազ. 831 դրամ:

Ներքին աուդիտի ենթարկված միավորներից <<Մասիսի Բ/Կ>> ՓԲԸ-ի հաշվետվությամբ գնահատված բարձր ռիսկային գործառույթները հանձնված են համապատասխան քննչական մարմիններին:

Միավորների ղեկավարներին ներկայացվել է 81 առաջարկություն՝ առաջարկվել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները ներքին աուդիտի բաժնի կողմից իրականցված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված բացթողումներն ու թերությունները աուդիտորական հաշվետվություններով սահմանված ժամկետներում վերացնելու ուղղությամբ, և արդյունքների մասին ներկայացնել գրավոր տեղեկատվություն:

2018թ. ներքին աուդիտի արդյունքում հայտնաբերված թերությունների և խախտումների վերաբերյալ նշված միավորներում իրականցվել է նաև վերստուգման գործընթաց՝ հայտնաբերված խախտումների շտկման ուղղությամբ:

Աուդիտի ենթարկված միավորումները նախատեսված ժամկետում վերացրել են արձանագրված շեղումներն ու բացթողումները և այդ մասին գրավոր տեղեկացրել ներքին աուդիտի ստորաբաժանմանը:

Կատարված աշխատանքների վերաբերյալ ստացված տեղեկությունները աուդիտորների կողմից գնահատվել և կայացվել է որոշում այդ տեղեկատվությունը ի գիտություն ընդունելու մասին, և այն օգտագործել հետագա կառավարչական համակարգերի գնահատման համար, ինչպես նաև որոշվել է նշված միավորների մնացորդային ռիսկերի աստիճանը:

4.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում զգալի աշխատանք է կատարվել քաղաքաշինության բնագավառում կառավարության տարածքային քաղաքաշինության իրականացման, առաջնահերթ լուծում պահանջող օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման, համայնքների կողմից քաղաքաշինության նպատակով հողհատկացման առաջարկությունների, դպրոցների վերանորոգման նախագծային առաջադրանքների կազմման և վերանորոգման աշխատանքների կազմակերպման, համայնքների ղեկավարների քաղաքաշինական գործունեության վերահսկման ուղղությամբ:

ՀՀ Արարատի մարզի համայնքներում առաջնահերթ լուծում պահանջող ծրագրերը իրագործելու նպատակով ՀՀ պետական բյուջեից 2018 թվականին հատկացվել է 321.9 մլն. դրամ:

Այդ միջոցները ուղղվել են մարզի առավել հրատապ խնդիրների լուծմանը, դրանց թվում են՝ մարզի միկրոռեգիոնալ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման ծրագիրը՝ - 128.0 մլն դրամ, 2 մշակութային՝ 19.0 մլն. դրամ, 1 առողջապահական՝ 15.6 մլն. դրամ օբյեկտների վերանորոգման ծրագրերը. ինչպես նաև 1-բազմաբնակարան շենքի դրենաժային համակարգի հիմնանորոգում՝ 81.0 մլն դրամ արժեքներով:

Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի, ՀՀ կառավարության և համայնքների համաֆինանսավորմամբ իրականացվում են՝

1. Արտաշատի բժշկական կենտրոնի հիմնանորոգման աշխատանքները՝ 1540.0 մլն. դրամ արժեքով, որը ավարտվել է 2018 թ.-ի սեպտեմբերին:
2. Արարատ քաղաքի ավագ դպրոցի հիմնանորոգման աշխատանքները՝ 722.2 մլն. դրամ արժեքով, 01.01.2019թ. դրությամբ հիմնանորոգման աշխատանքներն ավարտված են:
3. Նոր Խարբերդի N 2 միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքները 1215,0 մլն. դրամ արժեքով, որի ավարտը նախատեսված է 2019 թ-ի սեպտեմբերին:
4. Ընթացքի մեջ են Աբովյան համայնքի մանկապարտեզի նոր շենքի կառուցման աշխատանքները՝ 143.0 մլն. դրամ արժեքով և Դաշտաքար համայնքի մանկապարտեզի շենքի կառուցում՝ 137.0 մլն. դրամ արժեքներով:

5 ՀՀ մարզերում ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված՝ 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի այլ սուբվենցիաներ տրամադրելու ծրագրի շրջանակներում մարզի Նոր ուղի համայնքի հանդիսությունների սրահի կառուցում ծրագրով հատկացվել է 4 մլն 900 հազ. դրամ՝ որպես 40 տոկոս համաֆինանսավորում:

Համայնքների համաֆինանսավորմամբ մարզի 25 համայնքներից 2-ում ներկա պահին իրականացվում են խմելու և ոռոգման ցանցի կառուցման աշխատանքները, իսկ 23 համայնքներում մրցույթների հայտարարումը ընթացքի մեջ է: Հիմնանորոգման աշխատանքներում հիմնականում ընգրկվել են խմելու ջրի և ոռոգման ցանցերի կառուցման և վերանորոգման աշխատանքներ:

5.ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2018թ. ընթացքում մարզի 4 քաղաքների տեղական իշխանությունների կողմից որոշակի աշխատանք է տարվել բնակավայրերի թվով 439 բազմաբնակարան շենքերի մի մասի մուտքերի վերանորոգման, զբոսայգիների և հրապարակների բարեկարգման, փողոցային լուսավորության վերականգնման ուղղությամբ:

Վերջին տարիներին համայնքները լուրջ ուշադրություն են դարձնում բնակավայրերի գիշերային լուսավորության բարելավմանն ու վերականգնմանը: 2018 թվականին փողոցային լուսավորության վրա ծախսված գումարը կազմում է 42 998 մլն. դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանը վերահսկել է կոմունալ ծառայությունների և համայնքների ղեկավարների կողմից իրականացվող աղբահանության, փողոցների բարեկարգման, կանաչապատման աշխատանքները:

Ջրամատակարարում :Մարզի խմելու մայրուղի ջրագծերի երկարությունը շուրջ 870 կմ է, որից 660 կմ-ը՝ համայնքների տարածքում, իսկ ներքին ցանցերի երկարությունը շուրջ 4033 կմ է:

Մարզում առկա են խմելու ջրի 25 ջրամբարներ՝ շուրջ 37 հազ. խմ տարողությամբ:

Մարզպետարանի, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային պետական կոմիտեի հետ համագործակցության արդյունքում բարելավել է մարզի համայնքների ջրամատակարարումը: 2018 թվականին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի պատվիրատվությամբ մարզի համայնքներում ջրամատակարարման բնագավառում իրականացվել է շուրջ 11 հազար գ.ծ.մ. ներքին ցանցի փոխարինում:

Կատարվել է

- Քաղցրաշեն - Նորաշեն ջրատարի d=400մմ 3100 գ.ծ.մ. երկարությամբ ջրագծի կառուցում:
- Լանջազատ-Գետազատ d=720մմ 1900 գ.ծ.մ. երկարությամբ ջրագծի կառուցում:
- Գինեվետ համայնքը սնող ջրատարը d=400մմ 650 գ.ծ.մ երկարությամբ:
- Վանաշեն համայնքը սնող ջրատարը d=315մմ 400 գ.ծ.մ երկարությամբ:

Կառուցման փուլում է (կատարվել է աշխատանքների 90%-ը) Նոր Ուղու օրվա կարգավորիչ ջրամբարի շինարարական աշխատանքները:

<< ՎեոլիաՋուր >> ՓԲԸ-ի կողմից մարզում իրականացվել է 280.5 մլն դրամի ներդրում:

Գազամատակարարում: Կատարվել են գազաբաշխման համակարգերի, գործող վթարային գազատարների հետազոտման, վերատեղադրման և հիմնանորոգման աշխատանքներ: 2018 թ-ի ընթացքում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ընկերության ներդրումը մարզում կազմել է մոտ 79.8 մլն. դրամ, մասնավորապես՝

1. Բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռք բերում և տեղադրում՝ 48.7 մլն դրամ:
2. Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափյուրների ձեռքբերում և տեղադրում՝ 31.1 մլն դրամ:

2018 թ-ի ընթացքում համայնքային բյուջեներից գումարներ են տրամադրվել գազաֆիկացման նպատակներով՝ շուրջ 27.6 մլն դրամ՝

- ք. Մասիս 461 000 դրամ,
- Բաղրամյան 2 821 000 դրամ,
- Գեղանիստ 2 815 000 դրամ,
- Սիփանիկ 879 000 դրամ,

- Զորակ 2 995 000 դրամ,
- Մրգանուշ 1 340 000 դրամ,
- Ջրաշեն 10 500 000 դրամ,
- Աբովյան 5 814 000 դրամ:

Մարզի գազաֆիկացված բնակավայրերի թիվը կազմում է 84 /2003թ.-52/, գազից օգտվող ընտանիքների թիվը՝ 45832-ից հասել է 46646 /2003թ.- 18789/:

<<ԳազպրոմԱրմենիա>> ՓԲԸ-ի կողմից մարզում իրականացվել է 167.7 մլն դրամի ներդրում:

Հեռահաղորդակցություն: 2018թ-ի ընթացքում որոշակի աշխատանքներ են տարվել հեռահաղորդակցության ոլորտում, այսպես, թվայնացվել են Արարատ, Մասիս և Վեդի քաղաքների հեռախոսակայանները:

Տարվա ընթացքում ավելացել է համացանցից օգտվողների թիվը՝ մարզում այսօր ունենք 70 հազար ինտերնետ բաժանորդ:

Էլեկտրամատակարարում: Արարատի մարզի բնակչությանը որակով և անխափան էլեկտրաէներգիայի մատակարարման նպատակով «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից 2018 թ. իրականացվել է բարձրավոլտ ցանցերի ինչպես պլանային-պրոֆիլակտիկ, այնպես էլ մի շարք հիմնանորոգման աշխատանքներ: Կատարված աշխատանքների վրա ծախսվել է շուրջ 666.5 մլն. դրամ:

2018 թ-ի ընթացքում համայնքային բյուջեներից գումարներ են տրամադրվել փողոցային լուսավորության նպատակով՝ շուրջ 42 մլն 998հազ. դրամ՝

- ք. Արտաշատ 935 000 դրամ
- ք. Արարատ 1 000 000 դրամ
- ք. Մասիս 7 859 000 դրամ
- Նոր Կյանք 4 000 000 դրամ
- Մխչյան 958 000 դրամ
- Արմաշ 500 000 դրամ
- Ազատավան 945 000 դրամ
- Արևշատ 990 000 դրամ
- Բաղրամյան 3 941 000 դրամ

- Դալար 2 925 000 դրամ
- Երասխ 990 000 դրամ
- Պ. Սևակ 4 312 000 դրամ
- Վարդաշատ 250 000 դրամ
- Գեղանիստ 3 194 000 դրամ
- Դարակերտ 920 000 դրամ
- Դարբնիկ 920 000 դրամ
- Զորակ 1 955 000 դրամ
- Ղուկասավան 200 000 դրամ
- Նորաբաց 933 000 դրամ
- Սիս 960 000 դրամ
- Սիսավան 4 312 000 դրամ:

<< ՀԵՑ >> ՓԲԸ-ի կողմից մարզում իրականացվել է 666.5 մլն դրամի ներդրում,մասնավորապես ձմռանն անխափան էլեկտրաէներգիայի մատակարարումն ապահովելու նպատակով՝ կատարվել են 2018-2019 թթ. աշնան-ձմռան նախապատրաստական աշխատանքների ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները:

Աղբահանություն: 2019թ-ին նախատեսվում է համայնքային բյուջեների պլանավորման ժամանակ եկամտային մասում ներառել աղբահանության վճարներ, ավարտել ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ աղբահեռացման պայմանագրերի կնքման գործընթացը: Կազմակերպել շաբաթօրյակներ, իրականացնել ծառատնկման աշխատանքներ, կոնսերվացնել գույքագրված աղբավայրերը: Այդ նպատակով ստեղծված աշխատանքային խմբի կողմից աշխատանքներ են տարվում համայնքներում, որպեսզի իրենց 2019 թ-ի բյուջեների եկամտային մասում պլանավորվեն աղբահանության վճարներ, սահմանելով մեկ շնչի մասով աղբահանության վարձավճարներ, իսկ իրավաբանական անձանց հետ կնքել աղբահեռացման պայմանագրեր:

Մարզում գույքագրված աղբավայրերի թիվը 01.01.2018թ դրությամբ կազմել է 260, դրանցից վերացվել են 228-ը, մնացել է 32 առանձնապես խոշոր և տարիներով

կուտակված աղբավայրեր: Ներկա պահին մարզում շահագործվում է 27 աղբավայր: Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ամրագրված շահագործվող աղբավայրերի թիվը նախատեսվում է թողնել 3-4 հատ:

6. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2018 թվականին ՀՀ Արարատի մարզի տարածքում գտնվող միջպետական, հանրապետական, մարզային/տեղական/ նշանակության ավտոճանապարհներին ընդհանուր առմամբ կատարվել է 2 մլրդ 134 մլն 954.9 հազ դրամի նորոգման, պահպանման և շահագործման աշխատանքներ, որից՝

<u>ՀՀ պետական բյուջեի միջոցներով – 831 703.3 հազ. դրամ</u>

1. **Նախագծահետազոտական աշխատանքներ – 4 704.0 հազ. դրամ**

- Հ-13 Վաղարշապատ –Մասիս-Մ-2 կմ 16+000-կմ 18+000-2կմ հատվածի ասֆալտապատման նախագծահետազոտական աշխատանքներ – 3 564.0 հազ. դրամ
- ,,Արաքսավան'' ,, սահմանապահ ուղեկալ տանող կամուրջի հիմնանորոգման
- նախագծահետազոտական աշխատանքներ – 1 140.0 հազ. դրամ

2. **Ասֆալտապատում և հիմնանորոգում – 202 393.6 հազ. դրամ**

- Հ-13 Վաղարշապատ –Մասիս-Մ-2 կմ 16+000-կմ 18+000-2 կմ հատվածի ասֆալտապատում – 150 297.6 հազ. դրամ
- ,,Արաքսավան,, սահմանապահ ուղեկալ տանող կամուրջի հիմնանորոգում – 52 096.0 հազ. դրամ,

3. **Կապիտալ սուբվենցիաներ համայնքներին – 90 203.0 հազ. դրամ**

- ՀՀ Արարատի մարզի Արալեզ համայնքի փողոցների ասֆալտապատմանն աջակցելու նպատակով սուբվենցիայի տրամադրում ՀՀ Արարատի մարզի Արալեզ համայնքին – 41 682.2 հազ. դրամ
- ՀՀ Արարատի մարզի Այգավան-Եղեգնավան ճանապարհի կառուցմանն աջակցելու նպատակով սուբվենցիայի տրամադրում ՀՀ Արարատի մարզի Այգավան համայնքին – 48 520.8 հազ. դրամ,

4. **Մարզի ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում - 522 407.5 հազ. դրամ.**

4.1 Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ

- ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում – 333 900.0հազ. դրամ

- մետաղական արգելապատնեշների պահպանում – 90 500.0 հազ. դրամ

- նշագծում – 43 900.0 հազ. դրամ

4.2 Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում - 54 107.5 հազ. դրամ

5. ՀՀ մարզերում ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված՝ 2018 թվականի ՀՀ պետական բյուջեի այլ սուբվենցիաներ տրամադրելու ծրագրի շրջանակներում մարզին տրամադրվել է – 11 մլն 995.2 հազ. դրամ.

- Ոսկետափ - Համայնքի փողոցների ասֆալտբետոնյա ծածկի իրականացման աշխատանքներ – 5 մլն 877.6 հազ. դրամ,

- Արալեզ - Համայնքի Չարենցի փողոցի ասֆալտբետոնյա ծածկի իրականացման աշխատանքներ – 6 մլն 117.6 հազ. դրամ:

<u>Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Մարզի կենսական նշանակության ճանապարի բարելավում ծրագրով – 1 037 867.8 հազ դրամ</u>

- Արևշատ –Աբովյան ճանապարհի կմ 0+000-կմ 1+543 հատվածի վերանորոգման աշխատանքեր – 361 218.0 հազ դրամ
- Տ-2-20 Դիտակ – Ջրաշեն ճանապարհի կմ 0+000-կմ 2+116 հատվածի վերանորոգման աշխատանքեր – 365 844.8 հազ դրամ
- Հ-8-Տ-2-16 Մ-2 Հովտաշեն Հ-12 ճանապարհի կմ 0+000-կմ 2+120 հատվածի վերանորոգման աշխատանքեր – 310 805.0 հազ դրամ

<u>Համայնքային բյուջեների միջոցներից 2018 թվականի ընթացքում համայնքային ճանապարհների բարեկակարգման նպատակով տրամադրվել է 265 383.8 հազ դրամ:</u>

7. ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Մարզի վարչական տարածքը կազմում է 209 հազ. 003.2 հա, այդ թվում՝

- **գյուղատնտեսական նշանակության հողեր-156 հազ. 558.6 հա**
- **քաղաքացիների սեփականություն-42 հազ. 523.2 հա**
- **իրավաբանական անձի սեփականություն – 2 հազ. 797.4 հա**
- **տնամերձ հողեր – 9 հազ. 195.3 հա**
- **համայնքային սեփականության հողեր- 52 հազ. 308.2 հա**
- **պետական սեփականության հողեր – 111 հազ. 309.8 հա:**

Հողաշինության և հողօգտագործման բնագավառում մարզպետարանը, ելնելով մարզում հողային սուղ պաշարների արդյունավետ և նպատակային օգտագործման խնդիրներից, առանձնակի ուշադրություն է դարձրել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օրենսդրությամբ սահմանված կարգով օտարման և վարձակալության տրամադրման, հողերի պահպանման, հողերի նպատակային օգտագործման խնդիրների կարգավորման, հողային պաշարների կառավարման հարցերի կազմակերպման, հողաշինության ներտնտեսային փաստաթղթերի կազմման, սահմանային խնդիրների կարգավորման, հանրապետական և տարածքային նախագծերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման և այլ աշխատանքների կատարմանը:

Համայնքների հետ տարվող հետևողական աշխատանքի արդյունքում 2018 թվականին համայնքների վարչական սահմաններում ընդգրկված 84098.5 հա պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից նախատեսված 41054.0 հա դիմաց վարձակալության է տրամադրվել 44359.0 հա: Վարձակալած հողամասերի համար հաշվարկված 95 մլն 952.9 հազար դրամ վարձավճարի դիմաց, հաշվետու ժամանակաշրջանում գանձվել է 95 մլն 18.9 հազար դրամ գումար:

Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի վարձակալության տրամադրման արդյունավետության բարձրացման նպատակով հողամասերի սահմանների ճշտման, գնահատման խնդիրների պարզաբանման, վարձավճարների հաշվարկման և այլ հարցերի ճշտման և հստակեցման նպատակով պատշաճ աջակցություն է ցուցաբերվել համայնքների ղեկավարներին:

Համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողամասերի նպատակային նշանակության խնդիրների կարգավորման, տարածական զարգացման հիմնական

ուղղությունների մշակման, կառուցապատման նպատակով հողամասերի օտարման առաջնահերթության և այլ հարցերի համակարգման նպատակով նախաձեռնվել է բնակավայրերի (համայնքների) պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման աշխատանքները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարզում համայնքների միջոցների հաշվին պատվիրված գլխավոր հատակագծերը զգալի թիվ են կազմել, ուստի քաղաքաշինության կոմիտեի նախաձեռնությամբ նախատեսվեց մարզի թվով 9 միկրոռեգիոնալ միավորների կազմում ընդգրկված համայնքների համար, պետական միջոցների հաշվին մշակել պարզեցված գլխավոր հատակագծեր, որոնց մշակման աշխատանքները ավարտված են և գտնվում են համաձայնեցման փուլում:

Մինչև համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի ձեռք բերումը հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու հարցում համայնքներին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով նախատեսված աշխատանքների շրջանակներում առաջնային է համարվել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների մշակման աշխատանքների կանոնակարգման հարցերը:

2018թ մարզային հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 29 համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ, որոնց սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք: Ներկայացված սխեմաներից 20 ստացել է միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացություն, 9 գտնվում է համաձայնեցման փուլում:

Կարևորելով անասնապահության զարգացման հարցում արոտավայրերի կայուն բազա ունենալու խնդիրները մարզպետարանը բազմիցս անդրադարձել է 2009թ հոկտեմբերի 24-ի վարչատարածքային բաժանման մասին օրենքում կատարված փոփոխության արդյունքում մարզի թվով 26 համայնքների վարչական տարածքներում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի վերաբաշխման հարցերին և առաջարկել այն վերաբաշխել և տրամադրել մարզի բոլոր համայնքներին:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառում առավել կարևոր և դեռևս չլուծված խնդիրը մնում է կադաստրային քարտեզագրման ժամանակ թույլ տրված

սխալների ուղղումները: Քարտեզագրման այն սխալները, որը ենթադրում է հողամասի նպատակային նշանակության փոփոխություն, ուստի այն ճշտվում է հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կամ գլխավոր հատակագծերի մշակման կամ կազմման աշխատանքների շրջանակներում: Գրեթե անլուծելի են այն սխալները, որոնք պայմանավորված են հողամասերի սահմանների և սեփականության սուբյեկտների փոփոխության հետ: Նման խնդիրների լուծումը ըստ էության պահանջում է առանձնահատուկ մոտեցում, որը պետք է կարգավորվի իրավական ակտի ընդունմամբ:

2018 թվականի ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձվել համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերի սահմանների հստակեցման և փոփոխման վերաբերյալ բարձրացված հարցերին: Այդ նպատակով ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում ստեղծված աշխատանքային խմբի հետ միասին քննարկվել են համայնքների կողմից բարձրացված հարցերը և տրվել են համապատասխան լուծումներ:

Դեռևս քիչ չեն նաև այն դեպքերը, երբ համայնքների վարչական սահմանների նկարագրերի կազմման ժամանակ առանձին հողամասեր դուրս են մնացել այս կամ այն համայնքների վարչական սահմաններից: Նման խնդիր առկա է Խաչփար-Ազատաշեն-Հայանիստ, Այնթապ-ք.Մասիս-Նորաբաց և այլ համայնքներում: Առկա խնդիրների լուծման նպատակով իրականացվում են լրացուցիչ չափագրման աշխատանքներ, որոնց արդյունքում կկատարվեն սխալների շտկումներ:

8.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Գյուղատնտեսության ոլորտի բազմակողմանի ուսումնասիրությունը, ագրարային բարեփոխումների ճանապարհով մարզի գյուղացիական տնտեսություններին օգնության կազմակերպումը, գյուղատնտեսական աշխատանքներն ագրոտեխնիկական լավագույն ժամկետներում կատարելու համար խորհրդատվական աշխատանքները, ինչպես նաև արտադրված գյուղմթերքների անկորուստ հավաքի և իրացման

համար աջակցությունը մշտապես գտնվել է մարզպետարանի ուշադրության կենտրոնում:

Մարզում գործում են 49.116 գյուղացիական տնտեսություններ: Գյուղացիական տնտեսությունների և մշակովի հողատարածքների խոշորացման գործընթացի արդյունքում խոշոր հողակտորներ /5հա և ավել/ ունեցող գյուղացիական տնտեսությունների թիվը 2018 թվականին այս պահի դրությամբ կազմում է 439 գյուղացիական տնտեսություններ 2017 թվականի՝ 313-ի փոխարեն:

Ընթացքի մեջ են Վեդու ջրամբարից դեպի շահառու 8 համայնքներ գնացող ոռոգման համակարգերի կառուցման աշխատանքները, որում ընդգրկված են շուրջ 110 մարդ: 2018թ իրականացվել է շուրջ 49 ԱՄՆ դոլարի շինարարական աշխատանքներ:

Ոռոգման ջրի պահանջարկը բավարարելու և գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքը նվազեցնելու նպատակով կառուցվել է Քաղցրաշենի ինքնահոս 27579 մ երկարությամբ ոռոգման համակարգը, որը 12 համայնքների ոռոգման ջրի մեխանիկական համակարգը կփոխարինի ինքնահոսով՝ խնայելով 436 մլն դրամի էլեկտրաէներգիա և 24 մլն դրամ՝ պոմպակայանի շահագործման ծախսեր, ոռոգելով 1232 հա հողատարածք՝ նախկին 854 հա-ի փոխարեն:

2018թ. ընթացքում բերքի տակ կատարված ցանքերը մարզում կազմել են 16453 հա, նախորդ տարվա 18389 հա-ի փոխարեն, որոնք նախորդ տարվա համեմատ պակասել են 1936.8 հա-ով:

2017-2018թթ.. մարզում կատարված ցանքսերը

№	ՄՇԱԿԱԲՈՒՅՍԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2017թ. /հա/	2018թ. /հա/	Համեմատական 2018թ. 2017թ.-ի նկատմամբ /հա/
1	Հացահատիկ և հատիկընդեղեն	4761	3298.4	-1462.6
2	Բանջարեղեն	5730	4979.23	-750.1
3	Կարտոֆիլ	832	619.03	-213
4	Բոստան	1537.3	1325.4	-211.9
5	Կերային կուլտուրաներ	5243	5951.08	+708.1

6	Տեխնիկական մշակաբույսեր	286	280.1	-5.9
7	Ընդամենը ցանքսեր	18389	16453.2	-1936.8
8	Պտուղ	8014.45	8197.63	+183.22
9	Խաղող	4713.28	4646.8	-66.48
10	**Ընդամենը մշակվող հողեր (ներառյալ տնամերձ հողամասեր)**	**31117.7**	**29297.57**	**-1820**

Հացահատիկի և հատիկընդեղենների ցանքերը 2018թ. պակասել են 1462.6 հա-ով, բանջարեղենի ցանքատարածությունները՝ 750.1 հա-ով, բոստանային կուլտուրաների ցանքերը՝ 212 հա-ով, կարտոֆիլի ցանքերը՝ 213 հա-ով, կերային կուլտուրաների ցանքերը՝ ավելացել է 708.1 հա-ով և տեխնիկական մշակաբույսերի տարածքները պակասել է 5.9 հա-ով:

2018թ. մարզին հատկացվել է կալիումական պարարտանյութ՝ 175.6 տ, որից ներկրվել է 42.5 տ, ֆոսֆորական պարարտանյութ՝ 179տ, որից ներկրվել է 60.45 տ:

2018թ. գարնանային գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար մարզ է ներկրվել է գարնանացան գարու 25523.8 կգ, առվույտի 5331.5 կգ, գարնանացան ցորենի 6200կգ, եգիպտացորենի 220 կգ և կորնգանի 2328.6կգ սերմացուներ:

2018թ. մարզին պետության կողմից անհատույց հատկացվել է 415.44 կգ «Ռոդիֆակում Ս» տիպի մկնասպան թունանյութ և կազմակերպվել է պայքար կրծողների դեմ 5193 հա ցանքատարածություններում:

2017-2018թթ. արտադրված գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները

№	Մշակաբույսի անվանումը	2017թ. /տոննա/	2018թ. /տոննա/	2018թ.-2017թ.-ի նկատմամբ /տոննա/
1	Հացահատիկ և հատիկաընդեղեն	17299.13	12039.61	-5259.52
2	Բանջարեղեն	211992.2	174235.9	-37756.3
3	Կարտոֆիլ	21687.8	16243.8	-5444
4	Բոստան	57384.8	47548.3	-9836.5
5	Կերային կուլտուրաներ	141841	88716.4	-53124.6

6	Պտուղ	105427	92823.55	-12603.15
7	Խաղող	95169.61	70310.17	-24859.44

Ցանքատարածությունների կրճատման և եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով 2018թ նախորդ տարվա համեմատ պակաս է արտադրվել կարտոֆիլ՝ 5444 տոննա, հացահատիկ և հատիկաընդեղեն՝ 5259.52 տոննա, բանջարեղեն՝ 37756.3 տոննա, բոստան՝ 9836.5 տոննա, կերային կուլտուրաներ՝ 53124.6 տոննա, 12603.15 տոննա պտուղ և 24859.44 տոննա խաղող:

Մարզում 2018թ գործել է 98 հակակարկտային կայանքներ, սակայն մարզում արձանագրվել է շուրջ 289.9 հա կարկտահարության դեպք, պետության կողմից մասնակի փոխհատուցվել է 156.9 հա:

Մարզում գործող բանջարեղենի, պտղի և խաղողի վերամշակող ձեռնարկությունները 2018թ. կարողացել են մթերել հողօգտագործողների արտադրած բանջարեղենի, պտղի և խաղողի բերքը: Մարզի գյուղացիական տնտեսություններից բանջարեղենի, պտղի և խաղողի բերք են մթերել նաև առևտրային "Սպայկա" ՍՊԸ կազմակերպությունը և անհատ ձեռներեցները:

Մարզպետարանի կողմից վերահսկվել են համայնքների անասնաբույժների աշխատանքները, և ժամանակին կատարվել են պետական ծրագրով նախատեսվող բոլոր միջոցառումները: Հակահամաճարակային միջոցառումներն արդյունավետ ու ժամանակին կատարելով՝ հնարավոր եղավ խուսափել անասնապահական մթերքների միջոցով փոխանցվող հիվանդությունների զարգացումից ու տարածումից:

2019թ. հունվարի 1-ի դրությամբ անասնագլխաքանակի համեմատականը նախորդ տարվա համեմատ

Անասնատեսակը	**2017թ.**	**2018թ.**	**%**
Խոշոր եղջերավորներ /գլուխ/	46294	41059	-8.9
Որից՝ կովեր /գլուխ/	19815	14446	-8.6
Խոզեր /գլուխ/	19376	18198	-9.4
Մանր եղջերավոր /գլուխ/	95350	88350	-9.3

Թռչուններ /թև/	382081	348856	-9.1
Մեղվաընտանիքներ /հատ/	14211	12957	-9.1

Մարզում նկատվում է անասնագլխաքանակի պակաս. նախորդ տարվա համեմատ խոշոր եղջերավոր անասուններ 8.9%, մանր եղջերավոր անասուններ 9.3 %, խոզեր 9.4%, թռչուններ 9.1 %, մեղվաընտանիքներ 9.1 %:

2017-2018թթ Գյուղացիական տնտեսություններում առկա գյուղատնտեսական մեքենաների քանակ և սարքինություն

Գյուղատնտեսական Տեխնիկա		2017թ հունվարի 1-ի դրությամբ		2018թ հունվարի 1-ի դրությամբ	
		Առկա քանակը /հատ/	Սարքինության մակարդակը /%/	Առկա քանակը /հատ/	Սարքինության մակարդակը /%/
1	Բեռնատար ավտոմեքենա	1098	76.9	1098	77.2
2	Կոմբայն	34	88.6	35	97.1
3	Շարքացան	171	90.7	172	91.2
4	Կցասայլակ	574	87.5	575	88.0
5	Կուլտիվատոր	284	93.7	286	91.9
6	Հավաքիչ-մամլիչ	101	91.1	102	93.0
7	Տրակտոր-գութան	387	92	389	92.8
8	Խոտհնձիչ	112	88.7	115	93.8
9	Տրակտոր	1282	81	1288	81.1
10	Կերհավաք կոմբայն	21	86.4	22	100
11	Հատիկազտիչ մեքենա	32	84.4	32	84.4

2018թ. ընթացքում հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության լիզինգի պետական աջակցության ծրագրով մարզ է ներկրվել 18 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որը թարմացրել է մարզում առկա գյուղատնտեսական տեխնիկայի պարկը, սակայն, դա դեռևս շատ քիչ է և համայնքների գերակշիռ մասն ունի տրակտորների, վարող, ցանող, սրսկիչ մեքենաների, հնձող և այլ գյուղացիական գործիքների կարիք:

Մարզի հողօգտագործողներին ոռոգման ջրի մատակարարման գործի արդյունավետ կազմակերպման, մատակարարված ոռոգման ջրի դիմաց վարձավճարների հավաքագրման, ինչպես նաև միջտնտեսային ու ներտնտեսային ոռոգման ցանցերի սպասարկման աշխատանքներից է կախված մարզի գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը:

Մարզում ոռոգման աշխատանքները կազմակերպում են 3 ջրօգտագործող ընկերություններ (Երևան, Արտաշատ և Արարատ), որոնք 2018թ.-ի սակավաջուր տարում գյուղացիական տնտեսություններին բավարար եկրպով ապահովել են ոռոգման ջրով:

9.ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Արարատի մարզում գործում է 112 հանրակրթական դպրոց, այդ թվում՝ 21 հիմնական, 86 միջնակարգ և 5 ավագ դպրոցներ:

Մարզի 112 հանրակրթական դպրոցներում 2018-2019 ուսումնական տարում 34049 աշակերտով կոմպլեկտավորվել է 1652 դասարան: Աշակերտների թիվն անցած ուսումնական տարվա համեմատ ավելացել է 1545-ով, իսկ դասարանների թիվը՝ 42-ով: Դասարանների միջին խտությունը մարզում կազմում է 20,6 աշակերտ (հանրապետական միջինը կազմում է 17.2 աշակերտ):

Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներում աշխատում են 2878 ուսուցիչներ և մանկավարժական աշխատողներ, 1687 վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողներ:

Մարզի ուսումնական հաստատությունները 2018-2019 ուստարում առաջնորդվել են ԿԳ նախարարի հրամանով հաստատված օրինակելի ուսումնական պլանով: Դպրոցների ֆինանսավորումն իրականացվել է ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների կողմից սահմնված աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի համապատասխան գործակիցների կիրառմամբ: Տարիֆիկացիաները հաստատվել են ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված <<Հանրակրթական ուսումնական

հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկին>> համապատասխան:

Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներում անցած ուսումնական տարում կրթություն է ստացել 32504 աշակերտ, 2828 աշակերտ ավարտել է 9-րդ դասարանը, 637-ը՝ 12-րդ դասարան:

Մարզի ուսումնական հաստատություններում աշխատում են ՀՀ պետական պարգևների, ՀՀ նախագահի, ՀՀ վարչապետի, ՀՀ ԿԳ նախարարի և ՀՀ Արարատի մարզպետի շնորհակալագրերի և պատվոգրերի արժանացած բազմաթիվ ուսուցիչներ՝ 5 վաստակավոր մանկավարժ, 85 ուսուցչի շնորհվել է որակավորման տարակարգի 1-ին աստիճան:

2018 թվականի նոր ուսումնական տարվա համար՝ սեպտեմբեր ամսին քննարկվել և ընդունվել են մարզային ենթակայության հանրակրթական դպրոցների տարիֆիկացիոն ցուցակները, այնուհետև դրանք ներկայացվել են մարզպետի հաստատմանը:

2018 թվականի ընթացքում ևս մարզում գործել է 2015 թվականի հունվարից մարզում ներդրված ազգային դպրոցական սնունդ ծրագիրը: 2018 թվականին Ծրագրի իրականացման համար պետական միջոցներից մարզին համար հատկացվել է շուրջ 329.6 մլն դրամ(1 երեխայի համար 140 դրամ): Ծրագրի շրջանակներում մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցներին կից գործող նախակրթարանների 15320 երեխաների տրվել է դպրոցական սնունդ:

Դպրոցական սնունդ ծրագրի շրջանակներում ՀՀ պետբյուջեից համապատասխան ֆինանսական միջոցներ են տրամադրվել մարզի Վերին Արտաշատի, Վեդի քաղաքի թիվ 1 և Սուրենավանի դպրոցներին առընթեր շուրջ 1000 քառակուսի մետր մակերեսով ջերմոցային տնտեսություններ հիմնելու համար, որի արտադրանքը կուղորդվի այդ համայնքների դպրոցականների սննդի կազմակերպմանը:

Մարզային ենթակայության 49 դպրոցների 12-րդ դասարանի 425 աշակերտներ 2018 թվականի դեկտեմբեր ամսին հանձնել են պետական ավարտական քննություններ:

Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում <<Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջի հիմքով ձևավորվել են կոլեգիալ կառավարման մարմիններ՝ խորհուրդներ: Մարզի մի շարք դպրոցներում խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման հիմքով մարզպետի համապատասխան որոշումներով սահմանված ժամկետներում կատարել են խորհուրդների կազմերի փոփոխություններ: Խորհուրդներում իր ներկայացուցիչների միջոցով մարզպետը վերահսկողություն է իրականացնում խորհուրդների ընդունած որոշումների և գործունեության օրինականության նկատմամբ:

Տարիքային սահմանափակման՝ 65 տարին լրանալու հիմքով, մարզի 5 դպրոցների՝ Արաքսավանի, Այգեստանի, Նորաշենի, Արարատ գյուղի թիվ 1, թիվ 3 միջնակարգ դպրոցների տնօրենները ազատվել են զբաղեցրած պաշտոններից և կայացած մրցույթների արդյունքում ընտրվել են նոր տնօրեններ: 11 դպրոցներում առաջացած տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի արդյունքում վերընտրվել են տնօրեններ:

Մարզպետարանի և դպրոցների կոլեգիալ կառավարման մարմինների՝ խորհուրդների կողմից ձեռնարկված անհրաժեշտ միջոցառումների շնորհիվ մրցույթների գործընթացը բոլոր դպրոցներում անցել է բացառապես սահմանված կարգին համաձայն:

Մարզի 4 դպրոցներում առկա են տնօրենների թափուր պաշտոններ, որոնց համար սահմանված կարգով հայտարարվել են մրցույթներ:

Մարզում չկան հատուկ (օժանդակ) ուսումնական հաստատություններ: Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներից ներառական կրթություն իրականացնելու իրավունք ունեն 24-ը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 460 երեխաներ ստանում են ներառական կրթություն:

Պարբերաբար իրականացվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատում և հաշվառում:

Մարզպետարանի կողմից իրականացվել է կրթության ոլորտին վերաբերող որոշումների, կարգադրությունների, հրահանգների, տեղեկատվական նյութերի մասին

դպրոցներին իրազեկման և ինչպես նաև համապատասխան տեղեկատվական և այլ նյութերի բաշխման աշխատանքները: Ժամանակին ստացվել և դպրոցներին տրամադրվել են կրթության և գիտության նախարարության տեղեկագրերը: Ապահովվել է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը:

2018թ.-ի փետրվար- մարտ ամիսներին անցկացվել է օլիմպիադայի մարզային փուլ, որին մասնակցել է 416 աշակերտ: Հանրապետական փուլ է երաշխավորվել 83 աշակերտ:Հանրապետական փուլում 3 աշակերտ արժանացել է առաջին կարգի դիպլոմի, 7-ը՝ 2-րդ կարգի, 9-ը՝ 3-րդ կարգի դիպլոմի, 7-ը՝ գովասանագրի: Նշավանի միջնակարգ դպրոցի 1 աշակերտ արժանացել է գերազանցության մեդալի:

2018 թվականին անցկացված <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն ուսուցիչ>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթի մարզային փուլի արդյունքներով մարզի լավագույն տնօրեն է ճանաչվել Արտաշատ քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրեն Նաիրա Նիկողոսյանը, լավագույն ուսուցիչ՝ Արարատ քաղաքի թիվ 2 հիմնական դպրոցի դասվար Հասմիկ Անտոնյանը, լավագույն դաստիարակ՝ Այնթապի մանկապարտեզի դաստիարակ Աննա Դադայանը:

2018թ.ընթացքում Արարատի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվել են շարադրությունների մրցույթներ, կազմակերպվել են սպորտային, գեղագիտական, մշակութային, ստեղծագործական միջոցառումներ:

Մարզային ենթակայության 107 դպրոցներից 102-ում առկա են ՆԶՊ դասասենյակ, զինապահեստ և ուսումնական զենք ու զինամթերք: Մարզի Լանջառի, Տիգրանաշենի, Ազատաշենի, Սիփանիկի հիմնական և Նոր Խարբերդի N2 միջնակարգ դպրոցներում զինապահեստի բացակայության պատճառով ուսումնական զենք չկա:

Վերահսկվել են զինղեկների կողմից դասավանդման գործընթացի ճիշտ կազմակերպման, դասասենյակներում սահմանված կարգով ՀՀ խորհրդանիշների ճիշտ տեղադրման աշխատանքները:

2017-2018 և 2018-2019 ուստարիներին<<Ուսումնական հաստատության աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների>> մշակման համար մարզում կազմակերպվել և անց են կացվել սեմինար-պարապմունքներ:

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին մարզի հանրակրթական դպրոցների 11-րդ դասարանների աշակերտների համար անց են կացվել ռազմադաշտային պարապմունքներ, որի ժամանակ կազմակերպվել են 6-ժամյա դասընթացներ, այդ թվում նաև դպրոցներին ամրագրված զորամասերի հրաձգարաններում, կցված զորամասերի աշխատակիցների հետ համատեղ, կազմակերպվել է կրակային պատրաստություն, որի արդյունքում դպրոցների 11-րդ դասարանների շուրջ 1600 աշակերտներ մարտական փամփուշտներով կրակել են: Կրակային պատրաստության գործում մարզպետարանի միջնորդությամբ մեծ աջակցություն է ցուցաբերել Արտաշատում տեղակայված ՌԴ սահմանապահ ջոկատի հրամանատարությունը:

Կազմակերպվել և անցկացվել է ՆԶՊ օլիմպիադայի տարածքային և մարզայինփուլերը:

2018 թվականի ընթացքում նպատակային աշխատանք է տարվել աշակերտներին և ուսուցիչներին դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ծրագրերով ապահովելու ուղղությամբ: 2018 թվականի ընթացքում դպրոցներին են բաշխվել 1-4-րդ դասարանների 67025 դասագիրք, 2760 ուսումնամեթոդական գրականություն, 1656 դասամատյան, ԿԳՆ ԿԱԻ կողմից տրված շուրջ 2290-ից ավել ուսումնական ամսագրեր ու տեղեկագրեր, ԴՇՀ-ի միջոով տպագրված 91376 դասագիրք: Ծնողների կողմից կատարվել է պլանավորված 107,76 մլն. դրամի ներդրում, որը փոխանցվել է դասագրքերի շրջանառու հիմնադրամի դպրոցների բանկային ենթահաշիվներին: Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դասագրքերով ապահովելու նպատակով պետության կողմից դրամաշնորհի ձևով մարզի դպրոցներին 2017-2018 ուսումնական տարում տրամադրել է 10.14մլն դրամ գումար: Մարզի բոլոր դպրոցները ընդգրկվել են դասագրքերի ավտոմատացման համակարգում:

<<Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային ծրագրի շրջանակներում մարզի 32 ուսումնական հաստատություններում իրականացվում է

նախադպրոցական կրթական միկրոծրագիր: Այդ դպրոցներին կից գործող նախակրթարաններ են հաճախում 754 երեխաներ: ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմի 2018 թվականին անցկացված «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթածրագրի շրջանակներում 2018 թվականին հայտարարված մրցույթում Արարատի մարզի 4 դպրոցներ մրցույթի մասնակցելու հայտ են ներկայացրել:

Հանրակրթության զարգացման ուղղությամբ մարզը համագործակցում է միջազգային, հասարակական, բարեգործական կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ:

Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետ կապով և ընդգրկված են Հայաստանի կրթական ցանցում /ՀԿՑ/:

Մարզի հանրակրթական դպրոցների եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները պարբերաբար տեղադրվել են ուսումնական հաստատությունների անհատական կայքէջերում:

Մարզում կրթությանը, մշակույթին և սպորտին վերաբերվող նորությունները լուսաբանվում են մարզային հեռուստաընկերության, <<Արտաշատ>> և <<Արարատ>> թերթերի, ինչպես նաև հանրապետական զանգվածային լրատվական միջոցներով:

Մարզպետարանի պաշտոնական կայքում պարբերաբար տեղակայվում և թարմացվում են դպրոցների մասին տվյալները, տեղադրվում են ուսուցչի և տնօրենի թափուր տեղերի մրցույթների հայտարարությունները:

10. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Արարատի մարզում պետական առողջապահական ծրագրերի, մարզային ենթակայության պետական առողջապահական հիմնարկների աշխատանքների, բնակչության անվճար բուժօգնության իրականացումը, ձմեռային և ամառային զորակոչի ընթացքում նախազորակոչային տարիքի անձանց կցագրման և

զորակոչային տարիքի անձանց բուժօգնության կազմակերպումը և բժշկական օգնության ծառայությունների ծավալների ներդրումն իրականացվել են Հայաստանի Հանրապետության օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների ու այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

Մարզպետարանի աջակցությամբ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մարզում իրականացվել են.

1. երեխաներին բժշկական օգնության
2. հոգեկան հիվանդների բժշկական օգնության
3. սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության
4. ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության
5. Համաշխարհային բանկի վարկային
6. մանկաբարձական բժշկական օգնության
7. գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության
8. շտապ բուժօգնության
9. անհետաձգելի բուժօգնության
10. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տարափոխիկ հիվանդությունների և իմունականխարգելման,
11. տուբերկուլոզի դեմ պայքարի ԴՕՏՍ և ԴՕՏՍ +
12. զորակոչային տարիքի անձանց պատվաստումների կազմակերպման
13. զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, նրանց ընտանիքների անդամների բժշկական օգնության
14. սոցիալական փաթեթի շահառուների բժշկական օգնության և սպասարկման
15. ապահովագրական կազմակերպությունների շահառուների բժշկական օգնության իրականացման
16. ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) վաղ հայտաբերման և կանխարգելման նպատակով իրականացվող սքրինինգային ծրագրեր:

Նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական քննություններն, ինչպես նաև հիվանդանոցային հետազոտություններն ու բուժումն իրականացվել են ՀՀ առողջապահության նախարարի 30.11.2018թ. թիվ 3103-Ա հրամանի համաձայն՝ մարզի 4 բժշկական կենտրոնների կողմից, ողջ ծավալով: Այդ աշխատանքների լիարժեք կատարման համար մարզի բուժհաստատություններն ապահովված են կադրային ներուժով և լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների համար անհրաժեշտ նյութերով ու բուժսարքավորումներով:

Իրականացվել են հրամանատարաշտաբային ուսումնավարժանքներ պատերազմական և արտակարգ իրավիճակների վերաբերյալ: Կազմակերպվել են մարզի բժշկական կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների վերապատրաստումներ՝ ըստ ներկայացված պլանի, բուժանձնակազմի կարողությունների ստուգման և կատարելագործման նպատակով:

Ազգաբնակչության գանգատները և ահազանգերը՝ ուղղված ՀՀ կառավարություն, ՀՀ առողջապահության նախարարություն ու մարզպետարան, դրական լուծումներ են ստացել օրենքով սահմանված ժամկետներում: Զանգվածային լրատվության միջոցներով, ինչպես նաև առցանց հրապարակված նյութերին համապատասխան ընթացք են տրվել:

Մարզպետարանը ակտիվորեն համագործակցում է մարզի բնակչության առողջապահական խնդիրների լուծմամբ հետաքրքրված բոլոր կազմակերպությունների հետ: Ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող 178 երեխաներ ուղեգրվել են Արաբկիր բժշկական համալիրի երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի Արտաշատի մասնաճյուղի երեխաների զարգացման վերականգնողական կենտրոն, որտեղ նրանք ստացել են մասնագիտական խորհրդատվություն և վերականգնողական բուժում:

Մարզի բնակչության բուժկանխարգելիչ աշխատանքներն իրականացվել են 4 բժշկական կենտրոնների, 1 առողջության կենտրոնի, 1 ծննդատան, 50 գյուղերի բժշկական ամբուլատորիաների (վերջիններից 14-ը համայնքային ենթակայության) և նրանց կազմի մեջ մտնող 42 բուժամանկաբարձական կետերի միջոցով, որտեղ աշխատում են 439 բժիշկներ, 914 միջին բուժաշխատողներ:

Մարզպետարանի ենթակայության 6 հիվանդանոցային բժշկական կենտրոններում առկա է 488 մահճակալ:

Մարզում բնակչության բուժսպասարկման որակի բարելավմանն են նպաստում ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների ծրագրերը, որոնք ուղղված են մարզի առողջապահության ոլորտի զարգացման ռազմավարության իրականացմանը:

Պետության կողմից բնակչության անվճար բժշկական օգնության և սպասարկման ծրագրի շրջանակներում 2018թ-ին մարզի առողջապահության ոլորտին հատկացվել է 2մլրդ 990 մլն ՀՀ դրամ:

2018 թվականի ընթացքում հետևողական աշխատանքներ են տարվել հաստատություններում վճարովի ծառայությունների մուտքերի ավելացման ուղղությամբ : 2018 թվականին մարզի առողջապահական կազմակերպություններում մուտքերը կազմել են շուրջ 399 մլն 225,0 հազ. դրամ, որը 2017 թվականի համեմատ ավելացել է 61,2 մլն դրամով։ Վճարովի ծառայությունների մուտքերի գումարները, հիմնականում ուղղվել են առողջապահական հիմնարկների նյութատեխնիկական բազայի հարստացմանը և բուժսպասարկման որակի բարելավմանը:

2018 թվականին մարզի բժշկական կենտրոններ են դիմել 317460 քաղաքացի(ամբուլատոր այցեր՝ 2017 թվականին-250675), մարզի հիվանդանոցներում բուժվել են 13050 հիվանդ (2017 թվականին՝ 13176 հիվանդ), ծնվել է 1836 երեխա (2017 թվականին՝ 1930)։ Մայրական մահացության դեպքեր չեն արձանագրվել:

2018 թվականի ընթացքում մարզում արձանագրվել է օձի խայթման 21 դեպք: Տուժածները ստացել են համապատասխան հակաթույն և բուժվել են մարզի և Երևանի հիվանդանոցներում:

Կազմակերպվել է 35 քաղաքացիների առողջարանային վերականգնողական բուժումը, որից 9 երեխա իրենց խնամողներով՝ Ջերմուկի «Արարատ» մոր և մանկան առողջարանում:

Առողջապահության նախարարի 2018թ.-ի փետրվարի 21-ի թիվ 457-Ա որոշման համաձայն բնակչության սոցիալապես անապահով և առանձին/հատուկ խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ

պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով Արարատի մարզպետի 2018 թվականի մարտի 14 թիվ 32 որոշմամբ մարզում ստեղծվել են 4 տարածաշրջանային պոլիկլինիկական ծառայություններին կից մշտական գործող բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովներ: 2018թ.-ի ընթացքում հանձնաժողովներ են դիմել 50 քաղաքացի, կատարվել է 45 ուղեգրում, որից՝ Արտաշատի հանձնաժողով դիմել է 26, ուղեգրվել է 22, Մասիսի հանձնաժողով դիմել է 9 և ուղեգրվել է 9, Վեդու հանձնաժողով դիմել է 4 և ուղեգրվել է 4, Արարատի հանձնաժողով դիմել է 11 և ուղեգրվել է 10:

2018 թվականին Երևանի "Սուրբ Գրիգոր Լուսավորիչ" ԲԿ-ի կողմից մարզի Պ. Սևակ և Երասխ սահմանամերձ գյուղերում իրականացվել է 4 <<Բաց դռների օրեր>>, որի ընթացքում նեղ մասնագիտական խորհրդատվություն են ստացել 69 բնակիչներ:

2018 թվականին մարզի հատկացվել է մարդասիրական և կենտրոնացված ճանապարհով շուրջ 254.2 մլն դրամի դեղորայք (2017թ.՝ 150 մլն դրամ), որից մարդասիրական ճանապարհով՝ 150.7 մլն դրամ, կենտրոնացված՝ 103.5 մլն դրամ:

Մարզում 2018 թվականին պարբերաբար իրականացվել են ծրագրեր՝ վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման ուղղությամբ, ինչպես նաև հակահամաճարակային և կարանտինային, սանիտարա-հիգիենիկ միջոցառումներ:Միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ունեցել բոլոր շահագրգիռ մարմինները: Համաձայն առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 2-ի թիվ 1544-Ա, 2017 թվականի մարտի 28-ի թիվ 1014-Ա հրամանների պահանջների՝ հանրապետությունում իրականացված բաց ջրամբարների, գետերի ջրերի խոլերայի նկատմամբ հետազոտությունների արդյունքում Արարատի մարզի Շահումյան, Լուսառատ, Արարատ, Նոյակերտ համայնքների տարածքում Արաքս գետի ջրերի թվով 7 նմուշում հայտնաբերվել էին խոլերայի վիբրիոնի ոչ ախտածին ենթատեսակի մանրէներ :

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018 թվականի եղանակային պայմանները նպաստավոր էին խոլերա հիվանդության հարուցիչների կենսունակության, դրանց ախտածնության առաջացման համար, ինչպես նաև բնակչության շրջանում հիվանդության դեպքերի առաջացման և տարածման կանխելու նպատակով համայնքներում

կազմակերպվել և իրականացվել են համապատասխան աշխատանքներ բժշկական ամբուլատորիաների բուժանձնակազմերի կողմից: Ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումների արդյունքում զանգվածային կարանտինային վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններ 2018 թվականի ընթացքում չեն արձանագրվել:

2018 թվականի ընթացքում մարզում մալարիայի դեպք չի արձանագրվել:

Վարակիչ հիվանդությունների դեմ իրականացված կանխարգելիչ պատվաստումներում մինչև 1 տարեկան երեխաների ընդգրկվածությունը 2018 թվականի ընթացքում կազմել է 91,2 %:

Մարզում առկա է 29 բուժհաստատությանների տնօրենի թափուր հաստիք, որտեղ նշանակված են ժամանակավոր պաշտոնակատարներ:

Առողջապահության նախարարության ուղեգրով երիտասարդ 2 մասնագետներ են ընդունվել աշխատանքի «Վեդու ԲԿ» ՓԲԸ-ում:

Վերապատրաստման և որակավորման /կրեդիտներ տրամադրող/ դասընթացների են մասնակցել 418 բուժաշխատողներ:

Մասնագետների շուրջ 20 թափուր տեղերի համար պահանջարկը ներկայացվել է ՀՀ առողջապահության նախարարություն:

Համաշխարհային բանկի միջոցներով 2018թ.-ին ավարտվել է <<Արտաշատի Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ-ի հիմնական մասնաշենքի արդիականացման, հիմնանորոգման և գույքով ապահովման աշխատանքները: Ավարտվել է <<Վեդու Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ-ի լոկալ ջեռուցման համակարգի տեղադրման ծրագիրը՝ 15 մլն 753 հազ. դրամ արժեքով: <<Արմաշի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն պետական բյուջեի 3,2 մլն դրամ գումարի շրջանակներում իրականացրել է հիվանդանոցի հիմնական մասնաշենքի սանհանգույցների, ջրամատակարարման համակարգի և տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև մասնակիորեն թարմացվել է գույքը:

ՀՀ Արարատի մարզի հիվանդանոցային օգնություն ցուցաբերող հաստատություններից՝ <<Մասիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի և <<Արմաշի առողջության կենտրոն>> ԱԿ-ի շենքերը գտնվում են ոչ բարվոք վիճակում, խիստ կարիք

ունեն բուժական և ախտորոշիչ նորագույն սարքավորումների, կոշտ և փափուկ գույքի ձեռքբերման:

Մարզի 12 գյուղական համայնքներում անհրաժեշտություն կա բժշկական հաստատությունների շենքերի կառուցման:

Մարզի գործում են 4 շտապ օգնության կայաններ, որոնք 2018 թվականին արձանագրել են 26 286 կանչ: Մարզին 2018թ.-ին հատկացվել է 11 շտապ օգնության մեքենա, որից՝ 4 ռեանիմոբիլ, 7 գծային շտապօգնության մեքենա:

Մարզի առողջապահական հաստատություններին անհրաժեշտ են նոր սարքավորումներ, դժվարամատչելի հետազոտությունների սարքեր(համակարգչային, մագնիսառեզոնանսային տոմոգրաֆներ և այլն): Մարզը կարիք ունի 2 ամենագնաց շտապօգնության մեքենաների:

11. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2018թ-ին մարզպետարանը կազմակերպել և համակարգել է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության վերահաշվառումը, աջակցել է պետական կենսաթոշակների և նպաստների նշանակման ու վճարման, ընտանեկան և սոցիալական նպաստի համակարգի իրականացման և կատարելագործման աշխատանքների կազմակերպմանը, հիմնական խնդիր ունենալով իրականացնել սոցիալական արդարության վրա հիմնված սոցիալական աջակցության հասցեական և նպատակային քաղաքականություն: Նպաստել է բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծմանը, համագործակցել է մարզում բարեգործական ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ, համակարգել նրանց գործունեությունը:

Համաձայն ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի թիվ 61-Ն <<2018 թվականի ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի եվ հրատապ օգնության չափերը սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի n 1566-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> որոշման, մարզում 2018թ-ի հունվարից անցկացվել է սոցիալական անձնագրերում ամրագրված տեղեկությունների փաստագրման գործընթաց, նպաստների և հրատապ օգնության

նշանակման և վճարման հասցեականության մեծացման, ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման և համակարգն էլ ավելի կառավարելի դարձնելու համար:

Մարզում 2018թ.-ին ընտանիքի անապահովության համակարգում ընդգրկվել է 9090 ընտանիք, որից նպաստառուների ամսական միջին թիվը կազմել է 7489 ընտանիք:

2018թ. ընթացքում ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնության վճարման համար ֆինանսավորումը կազմել է 3 մլրդ 429 մլն 358 հազ. 799 դրամ, սոցիալական ծառայությունների կողմից տարվա ընթացքում վճարումը կազմել է 2 մլրդ 946 մլն 135 հազ. 500 դրամ՝

- 6331 ընտանիքների տրամադրվել է ընտանեկան նպաստ՝ 2 մլրդ 564 մլն 124 հազ. դրամի չափով,
- 1304 ընտանիքների տրամադրվել է սոցիալական նպաստ՝ 288 մլն 286 հազ. դրամ,
- 434 ընտանիքի հատկացվել է հրատապ դրամական օգնություն՝ 94 մլն 725 հազ. դրամ:

2018թ-ի ընթացքում մարզի նպաստառու ընտանիքների 890 առաջին դասարան հաճախող երեխաների համար՝ յուրաքանչյուրին 25 հազ. դրամ, տրվել է ընդամենը 22 մլն 250 հազ. դրամ, 350 նորածին երեխա ունեցող ընտանիքների 50.000 - ական դրամ օգնություն՝ շուրջ 17 մլն 500 հազ. դրամ:

Հուղարկավորության միանվագ օգնություն է ստացել ընտանեկան նպաստի իրավունք ունեցող 10 ընտանիք՝ յուրաքանչյուրին 50.000-ական դրամ:

Նախկին ԽՍՀՄ Խնայբանկում՝ մինչև 1993թ-ի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց, տարվա ընթացքում փոխհատուցում են ստացել 349 անձ, ընդամենը՝ 72 մլն 558 հազ. 375 դրամ:

Մարզպետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվում զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների սոցիալական խնդիրները: Նրանց նկատմամբ դրսևորվել է անհրաժեշտ հոգածություն, բարոյական աջակցություն: Մարզի տարածքում բնակվող զոհված ազատամարտիկների, ծնողազուրկ և բազմանդամ, սակավ ապահովված ընտանիքների 470 երեխաներ ամռան ընթացքում անվճար հանգստացել են Հանքավանի մանկական առողջարանական ճամբարներում:

2018 թվականի ընթացքում շարունակվել է աշխատանքները բնակարանի կարիք ունեցող զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներին հաշվառելու ուղղությամբ: Բնակարանային պայմանների բարելավման նպատակով զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների 4 ընտանիքների տվյալները ներկայացվել են ՀՀ պաշտպանության նախարարություն:

2018 թվականի ընթացքում մարզի սոցիալական ծառայությունների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցելով միայնակ և սոցիալապես ծայրահեղ անապահով 31 թոշակառուներ տեղափոխվել են տուն - ինտերնատներ:

Մարզում բնակվող 11073 փախստական և քաղաքացիություն ստացած նախկին փախստականներից բնակարանի կարիքավոր են 433- ը:

12. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Մարզում գործում են մարզային ենթակայության <<Պարույր Սևակի տուն-թանգարան>> և <<Սպարապետ Վ. Սարգսյանի տուն-թանգարան>> պետական ոչ առևտրային կազմակերպությունները, համայնքային ենթակայության 71 մշակույթի տուն, 18 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոց, 87 հանրային և 1 մարզային գրադարան, ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության 1 պետական դրամատիկական թատրոն, ՀՀ գրողների միության Արարատի մասնաճյուղը:

2018թ.-ին երաժշտական և արվեստի 10 դպրոցների որպես ազգային և լարային նվագարանների վարձավճարի փոխհատուցում՝ 110 աշակերտի համար պետբյուջեից տրվել է 25 մլն 671.2 հազ. դրամ:

Թանգարանները 2018թ.-ին պետության կողմից սուբսիդավորվել են 17մլն 753.5 հազ. դրամով:

Մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպման համար պետական բյուջեից մարզին հատկացվել է 4մլն 938 հազ. դրամ:

Մշակույթի բնագավառում մարզպետարանի գործունեությունը հաշվետու ժամանակաշրջանում նպատակաուղղվել է մարզային ենթակայության հաստատությունների

աշխատանքների, մշակութային, պետական, ազգային և այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը: Պարբերաբար ստուգվել է մարզի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակը:

Նշվել են բոլոր պետական, ազգային տոները, հիշատակի օրերը, կազմակերպվել են փառատոներ, ցուցահանդեսներ, հոբելյանական երեկոներ, համերգներ և այլն: Մարզի ստեղծագործական խմբերը և անհատ կատարողները մասնակցել են հանրապետական մրցույթների և փառատոների՝ արժանանալով պատվավոր մրցանակների: Նշանակալի տեղ է հատկացվել զանգվածային միջոցառումներին՝ Հայաստանի առաջին Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակ, Սահմանադրության օր, Տոլմայի փառատոն, Անկախության 27-րդ տարեդարձ, Տեառնընդառաջ, Վարդավառ, Թարգմանչաց տոն, Ազգային նվագարանների և երգի մարզային մրցույթ փառատոն, և այլ միջոցառումներ, որոնք աչքի են ընկել իրենց մասսայականությամբ:

Մարզում գործում են 8 մարզադպրոց և շախմատի ակադեմիայի 5 մասնաճյուղ: Մարզում կա 106 մարզադահլիճ, 3 ստադիոն, ֆուտբոլի 20 խոտածածկ խաղադաշտ, 8 լողավազան, 3 հրաձգարան:

2018թ.-ին անցկացվել են հուշամրցաշարեր տարբեր մարզաձևերից, միջհամայնքային, տարածաշրջանային և մարզային առաջնություններ: Մարզը ակտիվորեն մասնակցել է հանրապետական տարաբնույթ միջոցառումների՝ <<Լավագույն մարզական ընտանիք>> հանրապետական մրցույթ, Նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների դպրոցական ռազմամարզական խաղեր, <<Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն>>, <<Մարզական փառատոն>>, <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>>, <<Տարեցների հանրապետական խաղեր>>, <<8-12-րդ դասարանցիների սպարտակիադա>> հանրապետական մրցույթում մարզի հնգամարտի հավաքական թիմը գրավել է 1-ին հորիզոնականը, <<1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների սսպորտլանդիա>> մրցույթում Վանաշենի միջնակարգ դպրոցի թիմերը

գրավել են 1-ին հորիզոնականները, իսկ <<Գյուղական մարզական խաղեր>> հանրապետական մրցույթում մարզի հավաքական թիմը՝ 2-րդ հորիզոնականը:

Մարզի մարզիկները հաջողությամբ են հանդես եկել տարբեր հանրապետական և միջազգային մրցաշարերում՝ գրավելով պատվավոր հորիզոնականներ՝ ազատ ոճի և հունա-հռոմեական ըմբշամարտ, սամբո, ծանրամարտ և հեծանվավազք մարզաձևերից աշխարհի և Եվրոպայի պատանիների, երիտասարդների առաջնություններում 4 ոսկե, 2 արծաթե և 6 բրոնզե մեդալներ:

13. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2018թ. ընթացքում մարզում բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իրականացվել են աշխատանքներ՝ մթնոլորտի վնասակար ներգործությունների վերացման, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման, կենսառեսուրսների կառավարման, կանաչ տարածքների ավելացման, թափոնների կառավարման, բուսական և կենդանական աշխարհի վերարտադրության ապահովման, բնապահպանական փորձաքննության, հողային ռեսուրսների և ընդերքի պահպանության ոլորտներում:

<u>ՄԹՆՈԼՈՐՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ:</u> Մարզպետարանը համագործակցել է հիդրոօդերևութաբանական և արտակարգ իրավիճակների ծառայությունների հետ և վերջիններից ստացված ջերմաստիճանի, տեղումների և հնարավոր տարերային աղետների /հեղեղներ, կարկտահարություն/ վերաբերյալ տեղեկատվության մասին տեղյակ է պահել համայնքների ղեկավարներին և ազգաբնակչությանը:

Մթնոլորտային օդում վնասակար նյութերի սահմանային թույլատրելի կոնցետրացիայի գերազանցման դեպքեր 2018թ-ին չեն արձանագրվել:

<u>ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ:</u> 2018թ. ընթացքում իրականացվել է հսկողություն մարզի «Ազատի» և «Զանգակատան» ջրամբարներում ջրի կուտակման և ոռոգման շրջանում պլանային ջրթողունակության աշխատանքների նկատմամբ:

2018թ. ընթացքում շարունակվել է ՀՀ վարչապետի 06.05.2017թ № 413-Ն որոշման հավելվածի 17-րդ և 18-րդ կետերի կատարման ապահովումը, որի արդյունքում

վերահսկվել է մարզի ստորերկրյա ջրերի անխնա օգտագործումը, ինչպես նաև շրջապատի հողերի ճահճացումը:

ԱՄՆ ՄԶԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» /ԳԱՏՕ/ ծրագրի կողմից մարզի Սայաթ Նովա համայնքում իրականացվել է պիլոտային ծրագիր, որի արդյունքում ձկնաբուծարանի հետադարձ ջուրն օգտագործվել է 180 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածք ոռոգելու նպատակով:

Ինքնաշատրվանող խորքային հորերում փականային եղանակով կարգավորման արդյունքում ջրառը իջեցվել է տնտեսության ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված չափաքանակին համապատասխան: 2018թ-ին տեղադրվել է ավտոմատ կառավարման ջրամատակարարման համակարգեր, որը թույլ կտա կրճատել փաստացի ջրառի ծավալը: Ուժեղացվել են ջրաքանակի արդյունավետ օգտագործման և վերահսկողական նպատակով կատարվող աշխատանքները:

Մարզի 19 համայնքներում /Լուսառատ, Տափերական, Ոստան, Շահումյան, Մրգավետ, Հովտաշեն, Հովտաշատ, Դարբնիկ, Սիփանիկ, Սիս, Նորամարգ, ք. Մասիս, Մարմարաշեն, Ջրահովիտ, Արևաբույր, Սայաթ Նովա, Զորակ, Դաշտավան, Դարակերտ/ իրականացվել է 142.473 կմ երկարությամբ շուրջ 224.58 մլն դրամ արժողությամբ դրենաժների մաքրում և վերականգնում: ԱԻ մարզային ՓՎ մասնագետների հետ համատեղ կազմած ժամանակացույցով շրջայցերի ընթացքում սահմանվել է մշտական հսկողություն գետի վտանգավոր հատվածներում հունի վիճակի հիդրոտեխնիկական կառուցվածքների կայունության, ավազի արդյունահանման ընթացքում սպառնացող վտանգը կանխարգելելու, ապօրինի գետավազի արդյունահանումը դադարեցնելու նպատակով:

<u>ԿԵՆՍԱՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ:</u> 2018թ-ի ընթացքում մարզի ակտիվ բնակիչների, հասարակական կազմակերպությունների, արտակարգ իրավիճակների նախարարության մարզային փրկարար ծառայության օպերատորների ահազանգով աշխատանքներ է տարվել արագիլների ձագերին փրկելու համար: 9 դեպքերից 8 արագիլի ձագեր փրկվել են:

2018 թվականի ընթացքում բուսական և կենդանական աշխարհը, հատուկ պահպանվող տարածքների պաշտպանությունը մշտապես գտնվել է մարզպետարանի ուշադրության կենտրոնում: «Խոր Վիրապ» արգելավայրում շարունակվել են համապատասխան աշխատանքներ տանել չվող թռչունների և ջրաճահճային բույսերի զարգացման նպատակով:

ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ: Ապօրինի հողօգտագործման վերացման նպատակով համայնքի ղեկավարներին տրվել է համապատասխան առաջարկություններ:

Ստուգայցերի ընթացքում հայտնաբերվել են հողի բերրի շերտի հանման կանոնների խախտման 4 դեպք, աղբը ոչ սահմանված վայրերում տեղադրելու 1 դեպք: Մարզի համայնքների ղեկավարներին ներկայացվել է ՀՀ կառավարության 02.11.2017թ №1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006թ-ի հուլիսի 20-ի № 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշումը և առաջարկվել է հողի բերրի շերտի հանման, պահպանման և տեղափոխման դեպքերում ղեկավարվել ՀՀ կառավարության 08.09.2011թ-ի №1396-Ն որոշման պահանջներով:

Հողերի պահպանման հիմնախնդիրները խիստ արդիական են և պահանջվում են նորարարական մոտեցումներ: Տարիներ շարունակ արոտավայրերում հողատարածք տրամադրելու ժամանակ հաշվի չի առնվել անասունների արածեցման սահմանված նորմերը, մեծ թեքությամբ լանջերը և ժամկետները:

ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈԼՈՐՏ: 2018թ-ին մարզի 95 համայնքներից 64-ը պայմանագրեր են կնքել աղբահանություն իրականացնող կազմակերպությունների հետ, իսկ 31-ը կատարում է իր ուժերով:Ավելացվել են աղբահանություն իրականացնող օպերատորների թիվը:

Կազմված աղբահանության սխեմաների համաձայն, մարզի համայնքներում առանձնացվել են տարածքներ՝ կենցաղային աղբի կուտակման համար և վերահսկվել

է սանիտարական մաքրման սխեմայով նախատեսված աշխատանքների իրականացման գործընթացը:

Իրականացվել է կենցաղային և շինարարական աղբի հավաքում, փոխադրում, պահում համապատասխան աղբավայրերում հիմնականում համայնքային բյուջեների հաշվին՝ ավագանու կողմից հաստատված գումարի չափաբաժնով:

Վերահսկվում է մարզի տարածքում աղբավայրերի տարածքների օրինական ձևակերպման գործընթացը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ № 1325-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ մարզի 3 տարածաշրջանների համար մարզպետարանում կազմակերպվել են հանրային քննարկումներ միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի վերաբերյալ: Միաժամանակ մարզպետարանը մասնակցել է Ուրցաձոր, ք. Արարատ, Արալեզ, Ոսկետափ, Լուսառատ, Գոռավան համայնքներում կազմակերպվող հանրային քննարկումներին:

Վերոհիշյալ փաստաթղթերի ուսումնասիրության, հասարակական լսումների կազմակերպման, իրականացման վերաբերյալ արդյունքները սահմանված ժամկետներում տրամադրվել են բնապահպանության նախարարություն:

14. ԱՌԵՎՏՐԻ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Արարատի մարզը արդյունաբերական զարգացած մարզերից է: Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը 2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում կազմել է ՀՀ արդյունաբերության ծավալի 12,9%-ը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 12,6 %-ի դիմաց:

2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում մարզում ընդհանուր առմամբ գործել են 278 փոքր և միջին արտադրական ձեռնարկություններ, որոնցից առավել

խոշորներն են 103-ը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ձեռնարկոըթյունների թիվը մնացել է նույնը՝ 103: Մարզի արտադրական ձեռնարկություններից կարելի է առանձնացնել առավել խոշոր 12 ձեռնարկություններ, իսկ մնացածները հանդիսանում են փոքր և միջին արտադրական ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն «Արարատցեմենտ», «Մասիս-Տոբակո», «Մասիս–տոբակ ինտերնեյշն», Ավշարի գինու կոնյակի. Պռոշյանի կոնյակի գործարանի մասնաճյուղը, Արտաշատի և Արարատի /Բորոդինո/ պահածոների գործարանները, ոսկու կորզման ֆաբրիկան, Սուրենավանի հայ-ռուսական համատեղ բիտումի գործարանը, «Արարատ Գրուպ» զովացուցիչ ջրերի գործարանը և այլն:

Արարատի մարզում արտադրվում է Հայաստանի Հանրապետությունում արտադրվող գինու, կոնյակի, օղու արտադրանքի գերակշիռ մասը: Մարզի գինու-կոնյակի, պահածոների գործարանների թողարկած արտադրանքը իր բարձր որակի շնորհիվ մեծ ճանաչում է ձեռք բերել միջազգային շուկայում: Մարզում զարգացած է նաև փոքր և միջին ձեռնարկատիրությունը, դրանք հիմնականում սննդի, շինանյութերի, անտառային, քիմիական, մշակութակենցաղային նշանակության և թեթև արդյունաբերության ապրանքների արտադրական ձեռնարկություններ են:

2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին մարզի արտադրական ձեռնարկությունների, փոքր ձեռնարկատիրական սուբյեկտների կողմից թողարկվել է 160 մլրդ 169,2 մլն դրամի (ընթացիկ գներով) արդյունաբերական արտադրանք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 145 մլրդ 810,6 մլն դրամի դիմաց, աճը կազմել է 109.8%: 2017թ. նույն ժամանակահատվածի համեմատ մարզում ավելի է արտադրվել 14 մլրդ 358.6 մլն դրամի արտադրանք: Ընդհանուր առմամբ վերջին հինգ տարիների ընթացքում մարզում արտադրված արդյունաբերական արտադրանքը կազմել է հանրապետությունում արտադրված արդյունաբերական արտադրանքի 9.2 - 12.9%-ը:

Արդյունաբերական արտադրանքի իրացման ծավալները 2018թ հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 169 մլրդ 26,5 մլն դրամ՝ նախորդ տարվա 155 մլրդ 160,9 մլն դրամի փոխարեն, աճը կազմել է 108.9 %:

Մարզի բնակչության համար կարևոր նշանակություն ունի մշակող արդյունաբերությունը՝ 2018թ. 9 ամիսներին այն կազմել է 146 մլրդ 937,5 մլն դրամ՝ նախորդ տարվա 136 մլրդ 534,2 մլն դրամի փոխարեն, աճը կազմել է 107.6 %, դրանում առանձնանում է՝ սպառողական ապրանքների արտադրության ծավալների էական աճը՝ մասնավորապես 2018թ. 9 ամիսների ընթացքում ծխախոտի արտադրատեսակների արտադրությունը կազմել է 46 մլրդ 813.9 մլն դրամ, նախորդ տարվա 43 մլրդ 627.5 մլն դրամի փոխարեն, աճը կազմել է 107.3%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սննդամթերքի արտադրության աճը կազմել է 2 մլրդ 144 մլն դրամ, կամ 111.0%, թղթի արտադրության աճը կազմել է 1 մլրդ 815.3 մլն դրամ, կամ 116.4%:

Մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից արտադրված 36 անվանական հիմնական արտադրատեսակներից մշակող արդյունաբերության՝ սննդամթերքի արտադրության, ռետինե և պլաստմասե իրերի արտադրության, թղթի, կահույքի և այլն արտադրության ծավալները ձեռք է բերվել և անցել նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի արտադրական մակարդակը, միայն մի քանի արտադրատեսակների՝ խմիչքների, հագուստի արտադրության, քիմիական նյութերի արտադրության ծավալները նվազել են: Ավելացել է սննդամթերքի՝ մսամթերքի, հացի, ալյուրի, պանրի, ոչ ալկոհոլային խմիչքների, մակարոնեղենի, հրուշակեղենի, անձեռոցիկների ստվարաթղթի արտադրությունը:

Միջին ամսական անվանական աշխատավարձը 2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 144 հազ. 605 դրամ՝ նախորդ տարվա 140 հազ. 040 դրամի դիմաց, կամ կազմել է 102.8%:

2018թ. 9 ամիսների ընթացքում Արտաշատ, Մասիս, Արարատ քաղաքներում և գյուղական համայնքներում ստեղծվել են մի շարք փոքր ձեռնարկություններ և ավելի քան 139 առևտրային կազմակերպություններ:

2015 թվականից Արտաշատ քաղաքում կառուցված զովացուցիչ ջրերի գործարանը ամբողջ հզորությամբ աշխատում է 2017թ.-ից սկսած: «ԱՐԱՐԱՏ ԳՐՈՒՊ» ընկերության կողմից զովացուցիչ ջրերի գործարանում 2018թ. ընթացքում շարունակվել է իրականացվել նորարական ներդրումներ՝ շուրջ 100 մլն դրամ արժողությամբ:

Մարզի Մասիսի տարածաշրջանում «Ոսկե կացին» ՍՊԸ-ի կողմից՝ հայ-իրանական գործարարների 5 մլն ԱՄՆ դոլար ներդրումով, կառուցվել է ժամանակակից սարքավորումներով և նորագույն տեխնոլոգիաներով հզոր արտադրողականությամբ /1000 մանր եղջերավոր անասունների/ սպանդանոց: 360 խոշոր եղջերավոր անասունների սպանդանոցի կառուցման աշխատանքները սկսվել է 2017թ. հունվարից, նոր արտադրամասի շահագործումից՝ կստեղծվեն 100-ից ավել նոր աշխատատեղեր, 2018թ. –ի ընթացքում սպանդանոցում իրականացվել են 363 մլն դրամի աշխատանքներ:

«Գրին Հաուս» ՍՊԸ-ն մարզի Շահումյան համայնքում 25 մլն ԱՄՆ դոլար ներդրումով հիմնում է 30.0 հա ընդհանուր տարածքով ջերմոցային տնտեսություններ: 2015թ. ապրիլից ջերմոցային տնտեսությունը տվել է իր առաջին արտադրանքը, ստեղծվել է 150 աշխատատեղ: 2018թ. շարունակվել է ջերմոցային տնտեսության ընդլայնման ծրագիր՝ /20 հա-ով/, շուրջ 10 մլրդ 850 մլն դրամ արժողությամբ, արդյունքում ստեղծվել են ևս 100 նոր աշխատատեղ:

2018թ. իրականացվել է <<Ավշարի պահածոների գործարանի>> արտադրական ծավալների ընդլայնման ծրագիր՝ շուրջ 75 մլն դրամի,

Ոստան համայնքում սկսվել է նախկին տրիկոտաժի ֆաբրիկայի վերագործարկման ծրագիրը՝ հիմնավերանորոգվելու են տրիկոտաժի ֆաբրիկայի և մեխանիկական գործարանի մասնաշենքերը՝ տրիկոտաժի արտադրություն հիմնելու նպատակով: Ծրագրով 2017թ. իրականացվել է 1 մլրդ 250 մլն դրամի /2.5 մլն ԱՄՆ դոլար/ ներդրում, այնուհետև նույնքան իրականացվել է նաև 2018թ.-ին:Աշխատանքները կշարունակվեն նաև 2019թ. ընթացքում, արդյունքում կստեղծվեն շուրջ 1000 մշտական աշխատատեղեր:

Մարզի գյուղատնտեսության զարգացման վրա էական ազդեցություն կունենա 2018 թվականի սկզբից սկսված Երասխ համայնքում 30 հա գյուղնշանակության հողատարածքների վրա <<Գրին Ֆարմեր>> ՍՊԸ-ի կողմից կաթիլային համակարգի տեղադրմամբ ստեղծվող ինտենսիվ այգիները /հակակարկտային ցանցերի տեղադրում/: Ծրագրի արժեքը կազմում է 1 մլրդ 590 մրդ դրամ /3 մլն եվրո/, նախատեսվում է հիմնել ծիրանի, գիլասի, խնձորի թզուկ ծառատեսակների այգիներ: Այս ծրագրի իրականացման

արդյունքում կստեղծվեն 400 սեզոնային և 100 հիմնական աշխատատեղեր: Ծրագրով նախատեսվում է ավարտից հետո հետագայում այգիների հիմնում ևս 25 հա-ի վրա:

Սայաթ Նովա և Կանաչուտ համայնքներում մասնավոր հատվածի կողմից 2018թ.-ի ընթացքում իրականացվել են ջերմոցային տնտեսության ստեղծման աշխատանքներ՝ կառուցվում է 5000 քմ ժամանակակից ջերմոցային տնտեսություն՝ լոլիկի և վարունգի արտադրության համար և 3500 քմ ինտենսիվ այգի: Ընդհանուր գումարը կազմում է շուրջ 300 մլն դրամ:

Արարատի գինու գործարանում ավարտվել է նոր հնեցման արտադրամասի կառուցման աշխատանքները՝ իրականացվել է շուրջ 500 մլն դրամի /1 մլն ԱՄՆ դոլոր/ ներդրում: Արդյունքում գործարանում ստեղծվել են ևս 15 նոր մշտական աշխատատեղեր:

Նարեկ համայնքում 2018թ.-ից սկսվել է պահածոների փոքր գործարանի կառուցման աշխատանքները՝ 100 մլն դրամ նախնական արժեքով:

Կյանքի կոչելով նմանատիպ ծրագրեր՝ հնարավորություն է ստեղծվում արդյունավետ օգտագործելու մարզի բնական ռեսուրսները, մարզում կավելանա արտադրական ծավալները կստեղծվեն նոր աշխատատեղեր:

Ընդհանուր առմամբ 2018թ. մարզում գործող ձեռնարկությունների կարողությունների ընդլայնման, նոր ձեռնարկությունների ստեղծման արդյունքում ստեղծվել են շուրջ 598 նոր աշխատատեղեր:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: 2012-2018թթ Արարատի մարզում ծառայությունների ծավալը աճել է 1.5 անգամ, տեսակարար կշիռը 2018թ. հունվար – սեպտեմբեր ամիսներին ՀՀ-ում կազմել է 1,7%: Մարզում ծառայությունների ծավալը 2018թ. հունվար – սեպտեմբեր ամիսներին կազմում է շուրջ 20 մլրդ 912 մլն դրամ, նախորդ տարվա 16 մլրդ 752 մլն դրամի դիմաց, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմում է 124,8%, որից 1 շնչին բաժին է ընկնում՝ 81.151 հազ.դրամ՝ նախորդ տարվա 64.930 հազ. դրամի դիմաց:

ԱՌԵՏՈՒՐ: 2012-2018թթ. Արարատի մարզի առևտրի շրջանառության տեսակարար կշիռը ՀՀ-ում 2,2%-ից աճել է դարձել 4,1%: 2018թ. հունվար – սեպտեմբեր ամիսներին այյն կազմել է 40 մլրդ 388 մլն դրամ, կամ նախորդ տարվա նույն

ժամանակահատվածի 32 մլրդ 058 մլն դրամի նկատմամբ, առևտրի օբյեկտների քանակը կազմել է 1695՝ նախորդ տարվա 1559 –ի փոխարեն:

Ընդհանուր առմամբ մարզում սպառողական շուկան բնութագրվում է հաստատուն՝ կայունացված աճի տեմպով: Անցած տարվա նկատմամբ մանրածախ առևտրի կազմակերպությունների ապրանքաշրջանառության ծավալը ընթացիկ գներով աճել է՝ շուրջ 125.8 %: ով:

Մարզում 2018թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը ընթացիկ գներով կազմել է 40 մլրդ 388 մլն դրամ, ապրանքաշրջանառության ծավալի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատված համեմատ կազմել է 8 մլրդ 330 մլն դրամ: Մարզի մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի 63.8 %-ը ձևավորվել է խանութների, 2.7 %-ը՝ կրպակների, 28.4 %-ը՝ այլ օբյեկտների. 0.83 %-ը՝ գյուղարտադրանքի և 7.2%-ը՝ սպառողական ապրանքների շուկաների միջոցով:

Մարզում 2018 թ. 9 ամիսների ընթացքում սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալը փաստացի գներով կազմել է 2 մլրդ 820,5 մլն դրամ:

15. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

2018թ. շարունակվել է առևտրա-տնտեսական և մշակութային համագործակցությունները Ռուսասատնի Դաշնության մի շարք մարզերի և Բելառուսի Հանրապետության Բրեստի մարզի հետ:

Մարզպետարանի կողմից տարվա ընթացքում իրականացվել է միջոցառումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության Արարատի և Ռուսաստանի Դաշնության Ռոստովի մարզերի միջև համագործակցության մասին կնքված Փոխըմբռնման Հուշագրի շրջանակներում մշակութային և գործարար համագործակցության վերաբերյալ ծրագրերի իրականացմանը, մասնավորապես՝ ապահովվել է մարզի գործարար շրջանների մասնակցությունը Երևան քաղաքում հոկտեմբերին Ռուսաստան – Հայաստան միջտարածաշրջանային համագործակցության շրջանակներում անցկացվող ամենամյա «Երևան Էքսպո» նորարական ցուցահանդեսին, որի շրջանակներում կայացել են հանդիպումներ ՌԴ մարզերի և Արարատի մարզի գործարարների միջև: Քննարկվել են

գործարար համագործակցության խնդիրների վերաբերյալ հարցեր: Արդյունքում ձեռք է բերվել մի քանի պայմանավորվածություններ մարզում արտադրվող որոշ արտադրատեսակների հնարավոր արտահանումների վերաբերյալ:

Արարատի մարզպետարանը ընդհանուր առմամբ մեծ պատրաստակամությամբ ակտիվ մասնակցությունն է ունենում ամենամյա անցկացվող Հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովների աշխատանքներին:

2018թ. հունիսի 5-ից 7-ը կայացված Հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողովի շրջանակներում Արարատի մարզպետարանը հանդիպում է ունեցել ՌԴ Ռոստովի մարզի պաշտոնական պատվիրակության հետ: Արարատի մարզպետարանը ակտիվ մասնակցություն է ունեցել համաժողովի պլենար նիստի աշխատանքներին և այդ համաժողովի շրջանակներում կազմակերպված կլոր սեղաններին: ՀՀ Արարատի մարզպետը ողջունի խոսքով հանդես է եկել հունիսի 5-ին կայացված Հայ-ռուսական միջտարածաշրջանային 7-րդ համաժողովի պլենար նիստի բացմանը:

2018թ. հոկտեմբերի 7-12-ը Երևանում կայացել է Ֆրանկոֆոն պետությունների և կառավարությունների ղեկավարների 17-րդ գագաթնաժողովը, Մարզպետարանը ակտիվ մասնակցություն է ունեցել գագաթնաժողովի կազմակերպման նախապատրաստման աշխատանքներին, այնուհետև նաև գագաթնաժողովի աշխատանքներին: Մարզպետարանը իր մասնակցություն է ունեցել 17-րդ գագաթնաժողովի շրջանակներում կազմակերպվող Ֆրանկոֆոնիայի ավանում հայկական մարզերի՝ մասնավորապես Արարատի մարզի տաղավարների բովանդակային ներկայացման և մատուցման աշխատանքներին:

Հուշանվերների տաղավարում ներկայացվել են մարզի արտադրողների ապրտադրանքները

2018 թվականի ընթացքում մարզպետարանում կազմակերպվել է հանդիպումներ Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության, Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատների ներկայացուցիչների հետ:

2016թ. դեկտեմբերի 26-ին Երևանում ստորագրվել է փոխըմբռման հուշագիր ՀՀ Արարատի մարզի և ԻԻՀ Գիլանի նահանգի միջև եղբայրացման և սոցիալ-տնտեսական համագործակցության մասին:

2017թ. փետրվարի 14-ին ՀՀ Արարատի մարզպետը ընդունել է ՀՀ-ում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպան պարոն Ս. Նաջադին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հարցեր՝ կապված ՀՀ Արարատի մարզի և ԻԻՀ ԳԻլանի նահանգի միջև ստեղծված համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ, դրան հաջորդել է՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության նոյեմբերի 30-ի N 1117/17452-16 գրությամբ Արարատի մարզպետարանին է տրամադրվել ՀՀ Արարատի մարզպետին ուղղված ԻԻՀ Գիլանի նահանգապետի հրավերը:Կարևորելով Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև երկողմ հարաբերությունների, մասնավորապես միջմարզային հարաբերությունների զարգացումը, Արարատի մարզպետարանը սիրով ընդունել է ԻԻՀ Գիլանի նահանգապետի հրավերը, և փոխադարձ այցը իրականացվել է 2018թվականի ընթացքում՝ 2018թ. հունվար ամսին Իրանի Հանրապետության Գիլանի նահանգը Երևանում ԻԻՀ դեսպանության և ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով՝ Արարատի մարզպետարանին է տրամադրել՝ 2017թ. դեկտեմբերի 6-ի 41710-17 թվակիր գրությունը՝ Իրան մեկնող ՀՀ Արարատի մարզպետարանի պատվիրակության կազմի և այցի՝ հայկական կողմի համար ընդունելի ժամկետ վերաբերյալ: Հրավերի նպատակն էր քննարկել համագործակցությանն առնչվող հարցեր կապված Գործարար համագործակցության խնդիրների վերաբերյալ, մասնավորապես ՀՀ և ԻԻՀ միջկառավարական համատեղ հանձնաժողովի 15-րդ նիստի արձանագրության 6.1 և 6.2 կետերի կատարումն ապահովող միջոցառումների վերաբերյալ:

ՀՀ Արարատի մարզի պաշտոնական պատվիրակության այցը Իրանի Հանրապետության Գիլանի նահանգը իրականացվել է 2018 թվականի սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 8-ը. պաշտոնական պատվիրակությունը կազմված էր 7 հոգուց.

Այցը կազմակերպվել էր՝ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև միջմարզային հարաբերությունների զարգացմանն ուղղված՝

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Գիլանի Նահանգի միջև եղբայրացման և սոցիալ-տնտեսական համագործակցության մասին ստորագրված Փոխըմբռնման հուշագրով նախատեսված միջոցառումների իրականացման, ինչպես նաև մարզի գործարարներին աջակցություն ցուցաբերելու, մարզում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն օժանդակելու նպատակով

Արարատի մարզի պատվիրակության այցի շրջանակներում կքննարկվել են հարցեր կապված եղբայրացման և սոցիալ-տնտեսական համագործակցության զարգացմանն և խորացման ուղղությամբ տարվող աշխատանքների հետ՝ երկկողմ պաշտոնական պատվիրակությունների փոխադարձ այցելությունների, մշակութային երկկողմ միջոցառումների, զբոսաշրջության զարգացմանն ուղղված համատեղ միջոցառումների կազմակերպման, անասնապահության, մասնավորապես՝ ոչխարաբուծության հետ կապված հարցեր և այլն:

Իրանի Իսլամական Հանրապետության Գիլանի նահանգում Արարատի մարզի պաշտոնական պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Նահանգապետի աշխատակազմի հետ, այնուհետև առանձին- առանձին հանդիպում են ունեցել Գիլանի նահանգի արտաքին կապերի դեպարտամենտի, Զբոսաշրջության և մշակութային հարցերով զբաղվող, ինչպես նաև տնտեսական զարգացման և ներդրումների իրականացման գերատեսչությունների հետ: Այցի ընթացքում հանդիպում է կազմակերպվել Գիլանի առևտրի պալատում՝ Գիլանի նահանգի խոշոր գործարարների մասնակցությամբ: Արարատի մարզի պաշտոնական պատվիրակությանը ուղեկցել են Էնզելի նավահանգստի տարածքում գործող Իրանի Իսլամական Հանրապետության ամենախոշոր ազատ տնտեսական գոտի, կազմակերպվել են այցեր Գիլանի նահանգի մի քանի արտադրական ձեռնարկություններ՝ հատկապես խոշոր 3 ձկնաբուծարաններ, պոլիէթիլեն արտադրության Գիլանում ամենախոշոր գործարան: Այցի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում Ռեշտի/Գիլանի նահանգի վարչական կենտրոն/ հայ համայնքի հետ և Արարատի մարզի պատվիրակությունը այցելել է Ռեշտ քաղաքի հայկական եկեղեցի:

Մարզպետարանը՝ 2018թ. ընթացքում ևս, իր աջակցությունն և անմիջական մասնակցությունն է ունեցել մարզի համայնքների և միջազգային այլ պետությունների տարածքային միավորների հետ՝ մասնավորապես Փ. Վեդի համայնքի և Ֆրանսիայի Սեն Մարտեն Դեր քաղաքի, Արտաշատի և Ֆրանսիայի Քլամարի քաղաքների եղբայրացման և համագործակցության վերաբերյալ համաձայնությունների ձեռք բերման և իրականացման գործընթացներին՝

- 2015թ. Արտաշատի քաղաքապետարանի պաշտոնական պատվիրակությունը այցելել է Քլամար քաղաք և ստորագրվել է Հայտարարություն՝ համաձայն որի, երկու քաղաքները ի նշան բարեկամության վերահաստատում են իրենց Եղբայրացման Երդումը, որը ստեղծվել է դեռևս 2013թ. հոկտեմբերին: Ի նշան բարեկամության Քլամար քաղաքում բացվել է Արտաշատի անունը կրող հրապարակ, որտեղ տեղադրված է «Արտաշատի արծիվ» հուշարձանը, իսկ 2016թ.-ի սեպտեմբերին Քլամար քաղաքի նույն հրապարակում բացվել է Արտաշատի անունը կրող շատրվանը: Արտաշատի քաղաքապետարանի պաշտոնական պտվիրակությունը պարբերաբար մասնակցություն է ունենում Ֆրանսիայի Հանրապետության Վալանս քաղաքում անցկացվող Ֆրանկաֆոնիայի երկրների ամենամյա համաժողովի աշխատանքներին:

- 2012թ. Ֆրանսիայի Հանրապետության Սեն Մարտեն Դեր քաղաքի քաղաքապետը ներկայացրել է նախաձեռնություն՝ Փ. Վեդի համայնքում էկո տուրիզմը զարգացնելու նպատակով համայնքում ներդրումների իրականացնելու վերաբերյալ: 2017թ. ընթացքում շարունակվել են աշխատանքները Փոքր վեդու գյուղապետարանի և Ֆրանսիայի Հանրապետության Սեն Մարտեն Դեր քաղաքի քաղաքապետարանի միջև Փոքր Վեդու համայնքում ստեղծելու հնարավորություններ էկոտուրիզմը զարգացնելու համար:

Մարզպետարանը աջակցություն ցուցաբերել և անմիջական մասնակցություն է ունեցել ՀՀ միջազգային պայմանագրերով, միջազգային կառույցների կողմից մարզում իրականացվող տնտեսական ծրագրերին, մասնավորապես ՀՏՋՀ, ՀԲ, USAID, Ասիական զարգացման բանկ, ֆրանսիական զարգացման բանկ միջազգային վարկային և

հասարակական կազմակերպությունների կողմից մարզի տարածքում իրականացվող ծրագրերին:

2018 թվականի ընթացքում մարզում իրականացվել է ծրագրեր հետևյալ միջազգային կազմակերպությունների կողմից՝

- Ասիական զարգացման բանկի միջոցներով մարզի ոռոգման համակարգի կատարելագործման նպատակով՝ մեխանիկականից անցում ինքնահոս ոռոգման համակարգի, Քաղցրաշենի ինքնահոս ջրատարի և հարակից համայնքների ջրատարների կառուցում :

- ֆրանսիական զարգացման բանկի միջոցներով մարզի ոռոգման համակարգի կատարելագործման նպատակով Վեդու ջրամբարի կառուցում:

- ՀԲ –ի կողմից իրականացվում է Արտաշատի հիվանդանոցի վերակառուցման աշխատանքները՝ շուրջ 1 մլրդ 570 մլն դրամ արժողությամբ:

- 2018 թվականին Համաշխարհային բանկի կողմից իրականացվել է 1 մլրդ 37.8 մլն դրամի ներդրում մարզի կենսական նշանակության 3 ավտոճանապարհների՝ Հովտաշեն Հ-12, Արևշատ–Աբովյան, Դիտակ–Ջրաշեն հատվածների վերանորոգման համար:

- ԱՄՆ Միջազգային զարգացման Գրասենյակի «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» /ԳԱՏՕ/ ծրագրի կողմից մարզի Հայանիստ համայնքում իրականացվել է պիլոտային ծրագիր, որի արդյունքում տնտսվարող սուբյեկտին պատկանող ձկնաբուծարանի հետադարձ ջուրն օգտագործվել է 40 հա հողատարածքն ոռոգելու նպատակով:

2017 թ. սկզբից Ադիբեկյան հիմնադրամի միջոցներով իրականացվում են հետևյալ ներդրումային ծրագրերը՝

- Մասիս քաղաքում կառուցվում է ընտանեկան մարզական համալիր: Ծրագրի արժեքն է շուրջ 1 մլրդ դրամ/ 2 մլն ԱՄՆ դոլար/, իրականացվել են ավելի քան 150 մլն դրամի աշխատանքներ:

- Մասիս քաղաքում իրականացվում է երիտասարդական կենտրոնի կառուցման աշխատանքները՝ ծրագրի արժեքն է 75 մլն դրամ: Ծրագրի աշխատանքները ավարտվել են 2018թ:

Ադիբեկյան հիմնադրամի միջոցներով Մասիս քաղաքում և Նոր Կյուրին համայնքում իրականացվել է 85.5 մլն դրամի այլ բարեգործական ծրագրեր /Մասիս քաղաքի 1-ին դպրոցի ճանապարհի ասֆալտապատում, Նոր Կյուրինի մանկապարտեզի վերանորոգում և գույքի ձեռք բերում, Մասիս քաղաքում տարածքների ձեռք բերում հանգստի և ժամանցի գոտիներ կառուցելու համար/:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի միջոցներով 2018թ. ընթացքում իրականացվել է Դաշտաքար գյուղի մանկապարտեզի կառուցում՝ 177 մլն դրամի, Աբովյան գյուղի մանկապարտեզի՝ 198 մլն դրամի, Արարատ գյուղի մանկապարտեզի կառուցում՝ 125 մլն դրամի ծրագրերի իրականացում:

«Առաքելություն Հայաստան» Հասարակական Կազմակերպության միջոցներով կազմակերպվել է Արարատի մարզի 116 ծերերի սպասարկում, Արտաշատ քաղաքում 60 միայնակ կարիքավոր ծերերի խնամքի ծառայություններ են իրականացվել նաև <<Կարիտաս>> բարեգործական կազմակերպության կողմից:

2018 թվականին սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովման ծրագրեր են իրականացրել <<Կարմիր խաչ>> բարեգործական կազմակերպությունը՝ 40 հոգի, <<Կարիտաս>> բարեգործական կազմակերպությունը՝ 40 հոգի, <<Քրիստոնյա ավետարանչական>> եկեղեցի՝ 40 հոգի , <<Փիլադելֆիա>> հասարակական կազմակերպությունը՝ 40 հոգի և <<Առաքելություն Հայաստան>> բարեգործական կազմակերպությունը՝ 116 հոգի:

16. ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքների և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ուղարկված գրությունների պատասխանների հիման վրա 2018 թվականին թարմացվել է

առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց, երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխաների, ինչպես նաև երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների, տվյալների շտեմարանը:

- Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ՝ 121
- Երկկողմանի ծնողազուրկ՝ 61
- Միակողմանի ծնողազուրկ՝ 1276
- Հաշմանդամ երեխաներ՝ 789

Հաշվառվել են 3 և ավելի անչափահաս երեխա ունեցող թվով 2981 ընտանիքներ, որտեղ ապրում են 8321 երեխաներ: Իրականացվել են նրանց սոցիալական պաշտպանությանն ու հասցեական օգնությանն ուղղված ծրագրեր:

12 Երեխաների նկատմամբ սահմանվել են խնամակալություն և հոգաբարձություն:

2018 թվականին մարզում հայտնաբերվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 108 երեխա:Իրականացվել է երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն, կատարվել է կարիքների գնահատում և երեխաները ուղղորդվել են հատուկ և ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններ, իսկ 5 երեխա վկայագրվել է կրկնակի:

Մարզում հաշվառվել է 24 իրավախախտ երեխա: Ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելմամբ զբաղվող ծառայությունների հետ տարվել է համագործակցված աշխատանք՝ ուղղված նրանց սոցիալական վերականգմանը և զարգացմանը: Համայնքների ղեկավարներին առաջարկվել է իրավախախտ անչափահասներին հաշվառել որպես կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխա և նրանց հետագա գործունեությունը վերցնել հսկողության տակ:

Կատարվել են կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող ընտանիքների կարիքների ուսումնասիրում և գնահատում ,որի արդյունքում շուրջ 86 ընտանիքի հատկացվել է 487 կտոր հագուստ և հիգիենայի պարագաներ:

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող մանկատնից դուրս է գրվել և կենսաբանական ընտանիք վերադարձել 1 երեխա՝ կյանքի պայմանների ուսումնասիրության և կարիքների գնահատման հիման վրա:

Մարզպետարանի միջնորդությամբ սոցիալապես անապահով ընտանիքների թվով 82 երեխաներ իրենց ամառային հանգիստն անցկացրել են Հանքավանի «Հեքիաթների կիրճ» , «Խոտոր ջուր» ամառային ճամբարներում:

Կատարելով երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն և կարիքի գնահատում առանց ծնողական խնամքի մնացած 7 երեխաներ տեղավորվել են ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնում, իսկ երկու երեխա «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ ԾՔՀ «Կոտայք» մասնաճյուղում: Երկու երեխա Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ-ում, 1 ծնող երկու անչափահաս երեխաների հետ կանանց աջակցության «Լայթ Հաուս» կենտրոնում:

Նշված ժամանակահատվածում ստացվել է 2 դիմում ՝խնամատար ծնող դառնալու հնարավորության վերաբերյալ եզրակացություն ստանալու խնդրանքով:
Դիմողին կենսապայմաններն ուսումնասիրելու նպատակով կատարվել է տունայց , կազմվել համապատասխան ակտ և ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա տրվել է դրական եզրակացություն՝ խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին:

2 ընտանիքի տրամադրվել է սնունդ, հագուստ: Բաժինը մասնակցել է մասնագիտական թեմաններով տարբեր սեմինարների:

17.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2018 թվականի ընթացքում մարզի համայնքներում անցկացվել են հանրային լսումներ և քննարկումներ, բոլոր համայնքներում կազմակերպվել են հանդիպումներ ազգաբնակչության հետ: Ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ այդ հանդիպումների ընթացքում բարձրացված հիմնախնդիրներին լուծում տալու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում անցկացվել է մարզխորհրդի 4 նիստ և 17 խորհրդակցություն:

Համայնքի ղեկավարի սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների, համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված ժամանակացույցով իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել մարզի 34 համայնքում: Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված թերություններն ու բացթողումները քննարկվել են և հետևողական աշխատանք է տարվել դրանց վերացման ուղղությամբ, որի մասին, համաձայն սահմանված կարգի՝ յուրաքանչյուր եռամսյակ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

<u>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ:</u> Համայնքապետարանների աշխատակազմերում զբաղվածների թվաքանակը՝ 1171, որից համայնքային ծառայության պաշտոններ են զբաղեցնում 551-ը, որից 100-ը՝ գլխավոր, 124-ը՝ առաջատար, 327-ը՝ կրտսեր պաշտոններ:

Համաձայն ժամանակացույցի՝ համայնքային ծառայողների թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարվել է 43, անցկացվել է 41 մրցույթ:

Ապահովվել է համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը: Սահմանված ժամկետներում հայտարարությունները տեղադրվել են համայնքային կայքերում,ցուցատախտակների վրա, մարզպետարանի ինտերնետային կայքում և Azdarar.am կայքում:

Սահմանված կարգով և ժամկետներում կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների ժամանակացույցերը՝ հայտարարվել է 43, կայացել է 41 մրցույթ:

Անցկացվել է համայնքային ծառայողների 17 ատեստավորում:

Առանձնակի ուշադրության է արժանացել մարզի համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների, այդ թվում՝ ժամկետային

աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև պաշտոնից ազատված անձանց վերաբերյալ գրանցամատյանների (Ձև1, Ձև2) պատշաճ կերպով լրացնելու և համայնքային ծառայողների տվյալների բազան թարմացնելու գործընթացը:

Մարզի 90 համայնքում ներդրվել է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը: Ֆինանսական սուղ միջոցների պատճառով մարզի 5 համայնքներում /Լանջառ, Վարդաշատ, Գինեվետ, Ուրցալանջ, Դաշտաքար/ մինչ օրս գործընթացն ավարտված չէ:

90 համայնքներ ունեն համայնքային կայքեր /դոմեն հասցեներ/, Ռեալ IP – ներ և ապահովված են համապատասխան հզորության համակարգիչներով, ունեն վերապատրաստված մասնագետներ:

Մարզի թվով 16 շահառու գյուղական համայնքներում /Արաքսավան, Ազատաշեն, Արմաշ, Բերդիկ, Գինեվետ, Դեղձուտ, Դաշտաքար, Երասխ, Զանգակատուն, Լուսառատ, Հնաբերդ, Նոր ուղի, Նոր Կյուրին, Սիփանիկ, Վարդաշատ, Վարդաշեն/ կիրառվում են «Էլ-հասարակության և մրցունակության համար նորարարության» վարկային ծրագրի շրջանակներում տեղադրվեած անլար ինտերնետ կապի մատակարարման WiFi երթուղիչ սարքեր:

Մարզի տարածքում գործող ՀԼՄ-ների միջոցով պարբերաբար հեռարձակել են հաղորդումներ՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները և կատարվող ծրագրերը, պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքների և նորմատիվ իրավական ակտերի, դրանցում կատարվող փոփոխությունների վերաբերյալ հաղորդագրություններ՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:

Մարզի Արտաշատ, Արարատ , Մասիս, Վեդի և Այգեպատ համայնքներում ավագանու նիստերի հեռարձակումն իրականացվում է առցանց:

<u>ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>: Մարզի Արտաշատ, Արարատ , Մասիս, Վեդի և Այգեպատ համայնքներում ավագանու նիստերի հեռարձակումն իրականացվում է առցանց:

:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: Մարզի համայնքների և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների կողմից իրականացված գործառույթների կանոնակարգման նպատակով կատարվել են համակարգված աշխատանքներ:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի պահանջների, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համայնքների ղեկավարների պարտադիր լիազորությունների կատարման ուղղությամբ զինկոմիսարիատների, աշխատակազմերի քարտուղարների, ՔԿԱԳ տարածքային բաժինների պետերի և առանձին համայնքային ծառայողների հետ տարվել են համագործակցված աշխատանքներ:

2018 թվականին մարզպետի կողմից հաստատված << ՀՀ Արարատի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման>> 2018 թվականի պլանի համաձայն, մարզի թվով 30 համայնքներում անցկացվել են շտաբային ուսումնավարժություններ , որոնց ցուցաբերվել է անհրաժեշտ մեթոդական օգնություն:

Ի կատարումն 2017 թվականի ապրիլի 6-ի թիվ 14 արձանագրային որոշման պահանջների, ակտիվ աշխատանքներ են տարվել համայնքներում աղետների ռիսկի կառավարման /ԱՌԿ/ պլանների մշակման ուղղությամբ:Մարզի 95 համայնքներում ստեղծվել են արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովներ: Ճշգրտվել են համայնքների «Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման» պլանները:

Համաձայն մարզպետի կողմից հաստատված պլանի՝ 2018 թվականի ընթացքում մարզպետարանի և մարզի կազմակերպությունների՝ թվով 52 մասնագետներ վերապատրաստվել են ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում:

Տարվա ընթացքում իրականացվել են աշխատանքներ՝ մարզում կառավարման, կապի և ազդարարման համակարգի բարելավման ուղղությամբ: Մարզի 95 համայնքներում առկա շչակների թիվը 75 է, որից սարքին վիճակում են 37-ը:

Ընդհանուր առմամբ մարզի 31 համայնքում բնակչության ազդարարումն իրականացվում է շչակների միջոցով, մնացած համայնքներում՝ բարձրախոսների և ազդարարման այլ միջոցներով:

Պարբերաբար աշխատանքներ են իրականացվում մարզում ալլընտրանքային աշխատանքային ծառայության հետ կապված խնդիրների ուղղությամբ: Մասնավորապես՝ 2018 թվականի մարտ ամսին հաշվետվություն է ներկայացվել այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող անձանց վայրի, աշխատանքային բնույթի և ժամկետների վերաբերյալ /հաշվետվությունը ներկայացվում է ամենամյա պարբերականությամբ/:

ՀՀ Ոստիկանության, Արտաշատ քաղաքում տեղակայված ՌԴ սահմանապահ զորամասի և մարզի տարածքում տեղակայված ՀՀ ՊՆ զորամասերի հետ կատարվել է փոխհամագործակցված աշխատանք, ինչպես նաև իրականացվել է համագործակցություն՝ մարզի սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության Արարատի մարզային կենտրոնի և շահագրգիռ այլ կազմակերպությունների հետ: <u>ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ:</u> Մարզում գործում են 15 քաղաքական կուսակցությունների տարածքային և մարզային բաժանմունքներ, 50 հասարակական կազմակերպություններ, որոնցից 14-ը ծավալում են ակտիվ գործունեություն:

18. ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2018 թվականին զորահավաքային նախապատրաստության բնագավառի աշխատանքներն իրականացվել են Արարատի մարզի զորահավաքային նախապատրաստության ծրագրի, խոշոր համայնքների զորահավաքային մարմինների հետ ուսումնավարժական հավաքների ու պարապմունքների անցկացման պլանի և վերադաս մարմինների կողմից տրված հանձնարարականների համաձայն: Վերոհիշյալ ծրագրով և

պլանով նախատեսված հիմնական միջոցառումները կատարվել են սահմանված ժամկետներում և լրիվ ծավալով, բացառությամբ երկու միջոցառումների՝ «ՊԿԿ հիմնանորոգում և կահավորում», «Սահմանամերձ ու վտանգավոր տարածքների համայնքների բնակչության ազդարարման բարելավում», որոնք պահանջում են լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացում:

2018 թվականի ընթացքում վերամշակվել է մարզի զորահավաքային պլանը, մարզպետարանի, մարզպետարանի ստորաբաժանումների ու մարզի թվով 10 խոշոր համայնքների խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանները:

2018 թվականի պլանով նախատեսված 3 շտաբային մնարզումներն իրականացվել են լրիվ ծավալով՝ ծառայել են իրենց նպատակին:

Պատշաճ աշխատանք է տարվել «ՇԱՆԹ-2018» ռազմավարական հրամանատարաշտաբային զորավարժությունը պատշաճ նախապատրաստելու ուղղությամբ:Զորավարժության արդյունքներով մարզն արժանացել ՀՀ ՊՆ շնորհակալագրին:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից տրված հանձնարարականների համաձայն, 2018 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում զորահավաքային նախապատրաստության բաժնի կողմից մշակվել են մարզպետի տեղակալների, վարչությունների պետերի անհատական պլանների օրինակելի ձևերն ու հատկացվել համապատասխան պաշտոնատար անձանց: Մեթոդական օգնություն է ցուցաբերվել մարզպետարանի վարչությունների պետերին ենթակա բաժինների պետերի պլանների մշակման հարցում:

Մարզպետարանի կողմից մշակվել է մարզի 2019 թվականի մարզի զորահավաքային նախապատրաստության ծրագիրը, մարզի խոշոր համայնքների զորահավաքային մարմինների հետ 2019 թվականին ուսումնավարժական հավաքների ու պարապմունքների անցկացման պլանը, որը 2018 թվականի դեկտեմբերին հաստատվել է մարզպետի կողմից: